ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1949, № 3 *Общественные науки*

Ա. Համազասպյան

ԹՈՆԴՐԱԿԵՑԻՆԵՐԻ ՇԱՐԺՄԱՆ ԷՊՈԽԱՆ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Դարերի ընթացքում կղերա-ֆեոդալական և բուրժուա-նացիոնալիստական պատմագրության ներկայացուցիչները, նենգավոխելով հայ ժողովրդի պատմությունը, ամրացնում էին այն միտքը, թե անցյալում հայ ժողովուրդը դասակարգերի և դասակարգային պայքարի մասին նույնիսկ հասկացողություն չի ունեցել, որ բոլոր ժամանակներում հայ ժողովուրդը հանդես է եկել միասնաբար և հայերն ունեցել են ազգային միասնական կուլտուրա, միասնական իդեոլոգիա։

Մինչդեռ հայ ժողովրդի պատմությունը հարուստ է սոցիալական ուժեղ բախումներով, աշխատավոր ժողովրդի պայքարի բազմաթիվ դրվագներով ընդդեմ տիրապետող դասակարգերի։ Դասակարգային պայքարի այդպիսի շեշտված արտահայտություններից մեկն է թոնդրակեցիների նշանավոր շարժումը, որը մեծ տարածում էր գտել հատկապես 9—11-րդ դարերում։

Սույն հոդվածում մենք փորձել ենք բնութագրել այդ շարժման էպոխան և տալ թոնդրակեցիների գաղափարախոսությունը։

* * *

8-րդ դարում արաբ ոստիկանների՝ մեկը մյուսի հետևից կրկնվող ավերիչ ասպատակությունները, խալիֆայության հարկային խիստ քաղաքականությունը, ծայր աստիճան քայքայման էին հասցրել հայ աշխատավոր ժողովրդի տնտեսությունը։ Ենթարկվելով թալանի ու կրկնակի շահագործման, հայ գյուղացին չէր կարողանում վճարել հարկի այն քանակությունը, որը պահանջվում էր արաբ նվաճողների և տեղական շահագործողների կողմից։ Ժամանակակից պատմիչներից Ղևոնդը հետևյալ ձևով է նկարագրում արաբական զավթիչների հարկային քաղաքականությունը.

«Եւ առաքէ (Աբդլայ) զեղբայր իւր՝ զմիւս Աբդլա շրջել ընդ ամենայն աշխարհս իշխանութեանն իւրոյ։ Որ նախ ելեալ յաշխարհս Հայոց՝ բազում վշտօք եւ նեղութեամբք վտանգէր զամենեսին եւ հասուցանէր ի չքաւորութիւն տնանկութեան, մինչև պահանջել հարկս եւ ի մեռելոցն։ Եւ զամենայն բազմութիւն որբոց և այրեաց չարալլուկ տառապեցուցանէր...։ Խոշտանգէր եւ զբնակիչս աշխարհիս բռնագոյն և դառն հարկապահանջութեամբ, առնուլ ըստ գլխոյ բազում զուղէս (դրամ) արծաթոյ, եւ դնել կնիք կապարեայ յամենեցուն պարանոցսն։[1]

Ղևոնդի այս տեղեկություններից պարզ է դառնում, թե ինչպիսի բարբա-

---

[1] Պատմութիւն Ղեւոնդայ Մեծի վարդապետի Հայոց. Ս. Պետերբուրգ, 1887 թ., էջ 137։

բոսական միջոցների էին դիմում արաբական նվաճողները հարկահանության ժամանակ։

Պետականությունից և ինքնուրույնությունից զրկված հայ ժողովրդի վիճակն ավելի է վատանում հետագա տարիներում։

«Զսոյն ժամանակս,— ասում է պատմիչը,— ի հրամանատարութեան Եզիտի եւ յիշխանութեանն Աբդլայի միւսոյ յոյժ ծանրացաւ անուր լծոյ հարկապահանջութեան ի վերայ աշխարհիս Հայոց. քանզի դժոխաձև ագահութիւն անհամբոյր թշնամւոյն ոչ շատացաւ ուտել զմարմինս ընտրելոց Քրիստոսի հօտիս և ըմպել զարիւն իբրև զջուր զարհամարհանս նոցա. այլ համօրեն զբոլորս երկիրս Հայոց արկանէր ընդ անհանդուրժելի վտարանդիւք, զի վախճանեաց զգիւտ արծաթոյ ի յերկրէս, եւ ամենայն ոք տալով զպաճարանս ընչից իւրեանց՝ ոչ գտանէին զգինս փրկանաց անձին իւրեանց, եւ չար կրտտանօք, գելարանօք եւ կախաղանօք եւ դառն տանջանօք կեղէին զկեանս մարդկան։ Յորմէ փախստեայ եղեալ բազումք յայրս եւ ի փապարս երկրի զօղեալ թագչէին, եւ ոմանք ձիւնահեղձ եւ գետավէժ լինէին վասն անտանելի ալետիցն»։[1]

Միայն հայ պատմիչները չեն, որ վկայում են խալիֆայության կրնկի տակ հեծող ժողովրդի ծանր վիճակը։ Այս շրջանի ծանր հարկահանության մասին շատ մանրամասն տեղեկություններ են հաղորդում նաև արաբական աղբյուրները։

Իբն Խալդունի վկայությամբ, 8-րդ դարի վերջերում, Հայաստանն արաբական խալիֆայությանը տալիս էր 13 միլիոն դրախմա, չհաշված նատուրալ հարկը։[2]

Արաբական մի այլ պատմիչ Բալաձորիի վկայությամբ հպատակ երկրներից պահանջում էին նաև «սևահեր, սևահոն, երկար արտևանունքներով և բարձրահասակ աղջիկներ ու պատանիներ»։

Հայաստանում կիրառվող հարկային այս բարբարոսական քաղաքականության հետ միասին, արաբական խալիֆայությունը ձգտում էր միաժամանակ ջարդել «էրմենիայի» քաղաքական և զինական կարողությունը։ Որպես արդյունք խալիֆայության ներքին հակասությունների, Հայաստանը 9-րդ դարի երկրորդ կեսում տրոհվեց մի շարք մեծ ու փոքր՝ գլխավորապես արաբական իշխանությունների։

Ողջ «Արմենիայում» աստիճանաբար սկսեց գերակշռություն ստանալ արաբական իշխող տարրը։ Երկրի կարևորագույն կենտրոններում՝ Դվինում, Կարինում, Խլաթում, Արճեշում, Բերկրիում և այլ վայրերում բնակություն են հաստատում արաբ էմիրներ, առևտրականներ և զինվորականներ, որոնք աստիճանաբար պայմանական հողատերերից վեր են ածվում ժառանգական հողատերերի, տեր դառնալով լավագույն ու բերրի հողակտորների։ Չկարողանալով տանել արաբ ոստիկանների, ինչպես նաև ինքնիշխան էմիրների հալածանքներն ու կամայականությունները, հայ մի շարք նախարարական տներ, թողնելով իրենց հայրենի երկիրը, կալվածներն ու ունեցվածքը, բռնում են

[1] Ղևոնդ պատմիչ, էջ 135։

[2] Я. Манавдян. „О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен", 1930 г., стр. 147.

ինչպես դիմադրության ճանապարհը (Շապուհ և Համամ իշխաններ) ու հեռանում են դեպի Բյուզանդիա, իրենց հետ տանելով բնակիչների մի մասը։

Հայ քաղաքական կյանքում վաղուց արդեն դադարել էին որևէ դեր խաղալ Մամիկոնյան և Կամսարական նախարարական տները, նրանք՝ 772—775 թ. Ռ. ապստամբությունից հետո մեծ հարվածներ ստանալով խալիֆայության կողմից, այլևս չկարողացան ոտքի կանգնել։

Հայաստանի բախտն այդ ժամանակ տնօրինում էին արաբ ոստիկանները և մի քանի մանր էմիրություններ (կայսրիկներ՝ Ապահունյաց գավառում Մանազկերտ կենտրոնով, ութմանիկներ՝ Առբերանի գավառում Բերկրի կենտրոնով, Արծնում, Նփրկերտում և այլն)։

Սակայն արաբ ոստիկանների և էմիրների կողքին, Հայաստանի քաղաքական կյանքում, որոշ դեր էին խաղում Բագրատունիները և Արծրունի ու Սյունի նախարարական տները։ Նրանք տարբեր մեթոդներով ու ձևերով համառորեն պայքարում էին իրենց դիրքերի պահպանման ու ամրացման, ինչպես նաև քաղաքական ու տնտեսական նոր իրավունքների ձեռք բերման համար։ Բագրատունիներն ամրացել էին Դարույնքում, Սպերում։ Օգտագործելով արաբ էմիրների թուլությունը, նրանք կարողանում են աստիճանաբար իշխող դիրք ձեռք բերել հայ միջնաշխարհում և անգամ լայնացնել իրենց տիրապետության սահմանները հասցնելով այն Սպերից մինչև Տարոն, տեր դառնալով միաժամանակ Արարատյան դաշտավայրին և Շիրակին։ Վասպուրականի և Սյունիքի իշխանները սերտ համագործակցության մեջ են մտնում ազդեցիկ դիրք գրավող Բագրատունիների հետ և հետևում նույն քաղաքականությանը։ Հայ նախարարական տների, առանձնապես Բագրատունիների տնտեսական ու քաղաքական հզորացմանը նպաստում էին արաբական տիրապետության դեմ ուղղված ժողովրդական ազատագրական շարժումները։[1] Խալիֆաթի ռազմական ուժի քայքայումն ու կրած պարտությունները, ինչպես ներքին հակասությունները, որոնք առանձնապես լայն չափերի էին հասել 9-րդ դարի կեսերից։

Բուղայի դաժան ու ավերիչ արշավանքից հետո խալիֆայությունն ստիպված է լինում մեղմացնել իր քաղաքականությունը Արմենիայում, և նույնիսկ որոշ ինքնուրույնություն տալ Արմենիային՝ Աշոտ Բագրատունուն նշանակելով Հայաստանի կառավարիչ (856 թ.)։ 9-րդ դարի երկրորդ կեսին խալիֆայության սահմանների վրա նոր հարձակումներ է սկսում նրա արևելյան մրցակից Բյուզանդիան։ Արտաքին ու ներքին ծանր կացության մեջ ընկած Խալիֆ Մահմեդը ,կատարելով հայ իշխանների ու նախարարների պահանջը, 885 թվականին ճանաչում է Աշոտ Բագրատունուն որպես Հայաստանի թագավոր, և Հիսե ոստիկանի միջոցով թագ է ուղարկում Աշոտին։ Ելնելով Արևելքում իշխող դիրք գրավելու իր նպատակներից, Հայաստանի թագավորությունը ճանաչում է նաև Բյուզանդիան։ Եվ այսպես, ավելի քան 400 տարվա համառ պայքարից հետո Հայաստանը կրկին թոթափում է օտար նվաճողների բռնապետական լուծը։

Հայ միջնաշխարհում հանձինս Բագրատունիների հաստատվում է թագա-

[1] Հիշատակության արժանի է Խուրամյան Բաբեկի ապստամբությունը (817—837 թ.) Ադրբեջանում, և հայ ժողովրդական էպոսի նյութ դարձած սասունցիների ապստամբությունը (851 թ.) Հայաստանում։

վորական մի նոր դինաստիա, որը տևում է շուրջ հարյուր վաթսուն տարի, և որի տիրապետության շրջանում Հայաստանն ապրում է տնտեսական զարգացման նոր շրջան։

Բագրատունիների տիրապետության ժամանակաշրջանը հետաքրքիր է ոչ միայն իր տնտեսաձևով, այլև իր քաղաքական յուրահատկությամբ։ Ավելի քան 160 տարիների ընթացքում, չնայած Բագրատունիների բոլոր ջանքերին, ողջ հայ ժողովուրդը չմիավորվեց մեկ միասնական պետության մեջ, այլ մնաց բաժանված մի շարք անջատ իշխանությունների ու էմիրությունների։ Դեռ Բագրատունիների թագավորության տիրապետության առաջին տասնամյակներում, մենք տեսնում ենք իրենց ունեցվածքով ու քաղաքական դիրքով թագավորական տան հավասար այնպիսի նախարարական տներ, ինչպիսիք էին Արծրունիները, Սյունիները։ Նրանք ոչ միայն մրցում, այլ հաճախ, օգտագործելով թագավորական տան թուլությունը, անջատվում էին նրանից և կազմում ինքնուրույն թագավորություններ։ Այսպես, Սմբատ Ա-ի օրոք (908 թվ) Գագիկ Ա. Արծրունին հիմք դրեց Արծրունիների թագավորությանը Վասպուրականում։ Հետագա տարիներում ինքնուրույնության են հասնում և կիսանկախ իշխանություններ կազմում Վանանդի (Մուշեղ), Զորագետի (Դուրգեն) և այլ շրջանների իշխանները։

Բագրատունիներից անկախ էին Հայաստանի տերիտորիայում դեռ խալիֆայության ժամանակներից հաստատված արաբական էմիրները, որոնք իրենց տիրապետության (Դվին, Մանազկերտ, Խլաթ, Արճեշ և այլն) շրջաններում, ինչպես ասացինք, պայմանական հողատերերից արդեն դարձել էին ժառանգական հողատերեր։ Այդպիսով քաղաքական տեսակետից Հայաստանը Բագրատունիների շրջանում տիպիկ ֆեոդալական երկիր էր, որտեղ գերիշխում էր մասնատվածությունն ու ցրվածությունը։ Շիրակի Բագրատունիների աստիճանական թուլացմանը զուգընթաց իարխլվում էին թագավորության ծայրամասերը միմյանց հետ զոդող կապերը։ Խոշոր նախարարները գրեթե թագավորությունների էին վերափոխվում (Վասպուրական, Վանանդ), միմյանց դեմ էին դուրս գալիս նույնիսկ թագավորական տան անդամները (Հովհաննես, Սմբատ, Աշոտ) դաշնակցելով խոշոր նախարարների, արաբ էմիրների և ասնգամ բյուզանդացիների հետ։

Անշուշտ սխալ կլիներ կարծել, թե Բագրատունիներին իրենց տիրապետության ամբողջ ժամանակաշրջանում, չի հաջողվել սանձել երկրի կենտրոնախույս ուժերին և ենթարկել նրանց թագավորական իշխանությանը։ Մեր պատմական աղբյուրներում պահպանվել են բավարար քանակությամբ վկայություններ, ըստ որոնց Բագրատունիները շատ համառ պայքար են մղել ինչպես օտար նվաճողների, այնպես էլ երկրի առանձին նախարարական տների դեմ ուժեղ կենտրոնաձիգ պետականության ստեղծման համար։ Չպետք է անտեսել, որ եղել են այնպիսի շրջաններ, երբ ուժեղացել է Բագրատունիների գերիշխանությունը, մեծացել է Արծրունիների կախվածությունը Բագրատունիներից, Սյունիքի նախարարությունը ճանաչել է նրանց գերիշխանությունը, Տայքը և Վանանդը հնազանդություն են հայտնել նրանց, իսկ արաբական առանձին էմիրություններ նույնիսկ ստիպված են եղել հարկ վճարել Շիրակի Բագրատունիներին։

Մենք չենք բացառում այն հանգամանքը, որ առանձին շրջաններում այդ

սյուզերեն իրավունքի ճանաչումը կրել է ձևական բնույթ, բայց և չենք կարող անտեսել, որ որոշ ժամանակաշրջաններում Բագրատունիներն իրոք մեծ ազդեցություն են ունեցել Հայաստանի բոլոր ծայրամասերի և կիսանկախ տիրակալությունների վրա, հատկապես Սմբատ Ա., Աշոտ Գ., Սմբատ Բ. և Դավիթ Ա. թագավորների տիրապետության տարիներին։ Անտարակուսելի է, որ Բագրատունյաց թագավորության հենց այդ ժամանակաշրջանում, չնայած ծանր շահագործման և արտաքին ու ներքին պատերազմների չմարված սպառնալիքներին, հայ ժողովուրդն ապրել է տնտեսական ու կուլտուրական կյանքի համեմատաբար բարենպաստ ու խաղաղ ժամանակամիջոցներ և կարողացել է կարճ ընդմիջումներով շունչ քաշել։ Այդ կարճատև ժամանակաշրջանները բարերար ազդեցություն են ունեցել Երկրի տնտեսական ու կուլտուրական կյանքի զարգացման համար։

Բագրատունիների շրջանի տնտեսության ու կուլտուրայի զարգացման, քաղաքների և գյուղերի բարգավաճման մասին մենք բավական հարուստ տեղեկությունների ենք հանդիպում հայ և օտար պատմիչների աշխատություններում։ 10—11-րդ դարերի պատմիչ Ստ. Տարոնեցու (Ասողիկ) վկայությամբ «Յաւուրս սորա (Սմբատայ) եւ յիշխանութեան հօր իւրոյ (Աշոտ Ա.) էր շինութիւն եւ խաղաղութիւն յաշխարհիս Հայոց... Եւ այսպէս ագարակաց աւանացեալ եւ աւանաց քաղաքացեալ բազմամարդութեամբ եւ ընչեղութեամբ, մինչև հովուաց եւ անդէորդաց մետաքսեայ զգենուլ պատմուճան»։[1]

Ինչ խոսք, որ պատմիչը շատ վառ ու չափազանցրած գույներով է նկարագրել երկրի վիճակը 10-րդ դարասկզբին, անգամ հովիվներին հագցնելով մետաքսյա զգեստներ։ Սակայն այստեղ կարևորը մետաքսյա շորերը չեն (այդ տեղեկությունը կարող է ունենալ իր նշանակությունը տվյալ ժամանակաշրջանի մետաքսագործության զարգացումը պարզելու համար), այլ այն, որ ագարակները ավան են դարձել և ավանները ընդարձակվելով, տարածվելով դարձել են քաղաքներ, մի վկայություն, որ հաստատվում է մի շարք այլ պատմական հավաստի աղբյուրների վկայությամբ, հնագիտական պեղումների հարուստ նյութերով և պարզ դարձնում մեզ համար տնտեսական այն վերելքը, որ ապրել է Հայաստանը 9—11-րդ դարերում։

Մեզ հասած պատմական աղբյուրներից պարզ երևում է, որ Բագրատունիների շրջանում ժողովրդի հիմնական զբաղմունքը դարձյալ մնում էր հողագործությունը, բայց այդ բնագավառում ևս նկատելի են աչքի ընկնող տեղաշարժեր։ 9—11-րդ դարերում գյուղատնտեսությունը բավական առաջ էր անցել իր նորամուծություններով և մշակույթներով, ինչպես Արշակունիների, այնպես էլ հետագա շրջաններից։ Հացահատիկային մշակույթի կողքին արդեն նկատելի են նոր կուլտուրաների՝ բամբակի, բրնձի, կտավատի, խաղողի և տեխնիկական այլ բույսերի լայն տարածումը, իրեն զգացնել է տալիս նաև շերամապահությունը։ Մեծ չափերի է հասնում գութանի կիրառումը հողագործության մեջ, որը բավականաչափ նպաստում է բերքատվության բարձրացմանը։ Երկրագործության հետ մեկտեղ զարգանում է նաև անասնապահությունը, առանձնապես՝ ոչխարաբուծությունը, որը հարուստ բազա էր ստեղծում բրդի մշակության համար։

[1] Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան «Պատմութիւն տիեզերական». Պետերբուրգ, 1885, էջ 161։

Երկրի տնտեսության այդ ճյուղերի զարգացման մասին տեղեկություն։ Ներ է հաղորդում ժամանակի 9—10-րդ դարի պատմիչ Հովհ. կաթողիկոսը։

«Իսկ աշխարհիս Հայաստանեայց յաւուրսն յայնոսիկ այց արարեալ Տեառն և պատսպարեալ եւ յաջողեալ ի բոլոր բարութիւնս՝ ընակեցան իւրաքանչիւրոք ի ժառանգութիւնս իւրեանց եւ սեպհականեալ զերկիր՝ տնկեցին այգիս եւ արմատացուցին բուրաստանս ձիթենեաց եւ պարտիզաց. հերկեցին հերկս արտաքոյ փշոց եւ կթեցին պտուղս հարիւրաւորս. զեղան շտեմարանք ցորենոյ ի ժամանակի լրութեան հնձոց. լցան գուբք դինւոյ ի կութս այգեստանեայց, եւ լերինք ցրնծութիւն զգեցան. զի բազմացան ի նմա արօտականք անդեայք արջառոց եւ հօտք ոչխարացն։[1]

Գյուղատնտեսության հետ միասին իր զարգացումն է ապրում արհեստագործությունը։ Բնորոշն այս շրջանում այն է, որ արհեստն անջատվում է գյուղատնտեսությունից ու դառնում է պատկառելի թվով մարդկանց համար հիմնական զբաղմունք։ Ակադեմիկոս Մառի Անիում կատարած, ինչպես և հետագա հնագիտական պեղումներն ու ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ արհեստների շատ ճյուղեր հասել էին որոշ կատարելության և այդ ճյուղերի արտադրանքը դարձել էր ոչ միայն ներքին, այլև արտաքին շուկայի սպառման առարկա։ Անիում հայտնաբերված մի շարք արհեստների թաղամասերը վկայում են այն մասին, որ այդ շրջանում արհեստների առանձին ճյուղեր տեղավորված են եղել քաղաքի առանձին փողոցներում (կոշկակարների փողոց, դարբինների փողոց, նալբանդոց և այլն) և որ արհեստավորները կազմել են համքարություններ։

Հայ և օտար պատմիչների վկայություններից երևում է, որ Հայաստանում առանձնապես զարգացած է եղել մետաքսագործությունը, գորգագործությունը, ջուլհակությունը, արծաթագործությունը, պղնձագործությունը։ Արաբական աղբյուրների վկայությամբ Բագրատունիների շրջանում արագ զարգացում է ապրել հատկապես մանածագործությունը։ Դվինը հռչակված էր նուրբ գործվածքներով, որը հայտնի էր mariri անունով և՛ ներքին, և՛ արտաքին շուկայում։ Հիշատակվում է նաև, որ միջազգային առևտրի կենտրոն՝ Տրապիզոնում հռչակված էին հայկական մետաքսյա նուրբ գործվածքները և հատկապես դիպակը։ Տեքստիլագործության ու գորգագործության ծաղկմանը նպաստում էին նաև Հայաստանի հռչակ ստացած բնական ու արհեստական ներկերը, հատկապես որդան կարմիրը։

Նույն ժամանակաշրջանում որոշ զարգացում է նկատվում նաև հանքագործության մեջ, հատկապես պղնձի, երկաթի և արծաթի։[3] Դժբախտաբար մենք դեռ չունենք բավարար տեղեկություններ, թե ինչ չափերի է հասել այդ մշակությունը և տեխնիկական ինչ մեթոդներ են կիրառվել այդ գործում, բայց գտնված նյութական մնացորդները ցույց են տալիս, որ տեղական հանույթն է հանդիսացել այդ շրջանի արհեստների զարգացման նյութական բազան։ Արհեստների զարգացումը պայմաններ է ստեղծում ծավալուն ապրանքափոխանակության և առևտրական հարաբերությունների զարգացման համար։

---

[1] Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912 թ., էջ 198—199։

[2] А. Манандян, „О торговле и городах др. Армении", стр. 160—161.

[3] Նույն տեղում, էջ 189։

Դվինը, որը կործանվել էր 9-րդ դարի երկրորդ կեսում տեղի ունեցած երկրաշարժերից և վերականգնվել, ոչ միայն հանդիսանում էր արևմտյան և արևելյան ապրանքների փոխանակության տրանզիտային առևտրի կարևորագույն օղակներից մեկը, այլև խոշոր կենտրոն էր տեղական արդյունագործության։ Հայաստանի վրայով անցնող միջազգային նշանակություն ունեցող ճանապարհի ողջ երկարությամբ, այդ շրջանում, ծնվում էն ու ծաղկում առևտրի ու արտադրության խոշոր կենտրոններ Անին, Կարսը, Արծնը և մի շարք այլ քաղաքներ, առանձնապես Անին, որը մեծ զարգացում ապրեց, երբ դարձավ Բագրատունիների մայրաքաղաքը (961 թ.)։ Գտնվելով արևելքից արևմուտք անցնող առևտրական ճանապարհի վրա, Անին դարձավ միջազգային տրանզիտային առևտրի կենտրոն և կարճ ժամանակամիջոցում ճանաչվեց որպես «տիեզերահռչակ» քաղաք։ Կարինն ու Արծնը նույնպես դարձել էին վաճառաշահ կենտրոններ. «ծով եւ ցամաք երկներ եւ առատանայր կրել ի սմա զզօրութիւն իւր»,— ասում է Արիստակես Լաստիվերտցին Արծնի մասին, իսկ Կարսի մասին գրում է. «Հարստացեալք բազում ընչեղութեամբ ի ծովէ եւ ի ցամաքէ ամրարեալ»։[1] Տրանզիտային առևտրի այդ կարևոր մագիստրալի մի շարք կենտրոններում հաճախ կազմակերպվում էին մեծ տոնավաճառներ, որին մասնակցում էին, ոչ միայն հարևան երկրների, այլև Բյուզանդիայի, Արաբիայի, Պարսկաստանի և անգամ հեռավոր Հնդկաստանի առևտրականները։ Առևտրական մի այլ մագիստրալ, ոչ նվազ տնտեսական նշանակությամբ, անցնում էր Հայաստանի հարավային շրջաններով, մինչև Միջերկրական ծովը, այդ՝ հարավային ճանապարհների վրա գտնվող քաղաքներում՝ Վանում, Բերկրիում, Արճեշում, Մանազկերտում, Խլաթում, Բաղեշում բնակություն էին հաստատում մեծ քանակությամբ արհեստավորներ, առևտրականներ, որոնք գործոն մասնակցություն էին ունենում երկրի թե ներքին և թե արտաքին առևտրին։

Հետաքրքրական են նաև այդ քաղաքների բնակչության մասին մեզ հասած թվական տվյալները. այսպես օրինակ Թովմա Արծրունու վկայությամբ՝ 893 թվի երկրաշարժից Դվինում տուժել են 70 հազար բնակիչ։ Գեորգի Կեդրինի տեղեկություններով Արծնը վերցնելու ժամանակ սելջուկները 1049 թ. ոչնչացրել են 140.000 մարդ,[2] ըստ որոշ տվյալների՝ Անիում բնակիչների թիվը 100.000-ից պակաս չպետք է եղած լինի։ Բնակչության, արհեստավորների և առևտրականների կենտրոնացումը քաղաքներում պահանջ էր դնում նոր բնակելի տարածությունների՝ արհեստանոցների, վաճառական շենքերի և այլ կառուցումների։ Կուտակված միջոցները հնարավորություններ էին տալիս բարձրարժեք ճարտարապետական կոթողներ բարձրացնելու նոր կառուցվող քաղաքներում։ Կառուցվում էին նոր՝ ընդարձակ ու հարմարություններ ունեցող քարվանսարաներ, իսկ արհեստավորների և գործավորների համար նույնիսկ առանձին թաղամասեր։ Քաղաքները շրջապատվում էին հոյակապ պարիսպներով, որոնք ոչ միայն պաշտպանական նշանակություն ունեին, այլև փայլում էին իրենց վեհությամբ ու գեղեցկությամբ։ Քաղաքները օրեցօր հարստանում էին շքեղ պալատներով, եկեղեցիներով, իսկ պարիսպներից դուրս՝ տասնյակ այգիներով ու պարտեզներով։ Եկեղեցիները, պալատները, նույնիսկ

[1] Պատմություն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ, Թիֆլիս, էջ 78, 91։
[2] Манандян, О торговле и городах в древней Армении, стр. 155.

աշխարհիկ շենքերն ու պարիսպները զարդարվում են քանդակներով, իսկ որոշ դեպքերում նաև որմնանկարներով (ֆրեսկո)։ Քաղաքներում կառուցվում են փողոցներ, թաղնիքներ, կոյուղի, ջրմուղ, ծաղկանոցներ ու պարտեզներ։

«Ի, իրև ակն մի պատուական լուսադեղ պայծառութեամբ փայլէր քաղաքս մեր ի մէջ ամենայն քաղաքաց, ամենեւին գեղեցիկ, բոլորովին զարդարուն»,[1] — գրում է Լաստիվերտցին Արծնի մասին։ Իսկ Անին ըստ Լաստիվերտցու, Ասողիկի ու ժամանակակից այլ պատմիչների վկայությունների, ինչպես և նյութական կուլտուրայի մնացորդների, պատկերվում է մեր առաջ որպես ծաղկած առևտրի ու արհեստների մի կենտրոն, քաղաքային աշխույժ կյանքով, աշխարհիկ վայելքներով, դասակարգային սուր հակամարտություններով և այլն և այլն։

Քաղաքների վերաշինման ու դեղեցկության մեջ մեծ մասնակցություն են ցուցաբերում արհեստավորներն ու առևտրականները։ Ա. Լաստիվերտցին Արծն քաղաքի մասին գրում է.

«Վաճառականք սորա փառաւորք եւ օգնողք թագաւորք ազգաց» կամ «վաճառականք եկեղեցւոյն շինողք եւ զարդարիչք»։[2]

Քաղաքներում ապրող հայ ազնվականությունը, հոգևորականությունը, մանր հողատերերը և առևտրականներն իրենց առտնին կյանքը, նիստն ու կացը, կենցաղը, սովորությունը, նույնիսկ հանդերձները հարմարեցնում էին իրենց հարստությանը, հագնում էին գիպակ, մետաքսե պատմուճաններ ոսկեթել ասեղնագործներով։ Կանայք օգտագործում էին մետաքսյա երեսի քող ոսկեթելով նուրբ կարված, մետաքսե ժապավենից գոտի, ապարանջաններ ու մատանիներ, ոսկե զարդեր և այլն։

Շքեղ են եղել նաև տնային կահկարասիները, գորգերը, բազմոցները, վարագույրները։ Գործածության իրերը մեծ մասամբ եղել են պատրաստված գեղարվեստական բարձր ճաշակով արծաթից, ապակուց և այլ թանկարժեք նյութերից։ Իշխաններն ու ազնվականները կրել են գեղեցիկ արծաթապատյան սրեր, որոնց մեծ մասը պատրաստվում էին տեղական արհեստավորների կողմից։

9-րդ դարի վերջերին և 10-րդ դարի ամբողջ ընթացքում երկրի հարստություններն ու նյութական կարողությունները կենտրոնանում են մի կողմից խոշոր կալվածատիրության, իսկ մյուս կողմից առևտրական դասի ձեռքում։ Հանդես է գալիս դրամական տնտեսություն, դրամն այս շրջանում դառնում է մի տեսակ աստված. «Ու յարգի եղեւ արծաթասիրութիւն քան զաստուածապաշտութիւն, եւ Մամոնայն (դրամը) քան զՔրիստոս»։[3]

Հարստության դիզման, շվայտ և փարթամ կյանքի համար կրկնապատկվում է աշխատավորության շահագործումը։ Մեծ ծավալ է ստանում խաբեբայությունը, դողությունը, կաշառակերությունը, վաշխառությունը։

«Իշխանք սորա գողակիցք եղեն դողոց,— գրում է Լաստիվերտցին Արծն քաղաքի մասին,— վրիժագործք և արծաթոյ ծառայք. դատաւորք սորա կաշառուք եւ վասն կաշառաց գողանային զիրաւունս. եւ դատաստան որբոց ոչ առնէին, եւ յիրաւունս այրեաց ո՛չ խոնարհէին։ Վաշխից և տոկոսեաց օրէնք

[1] Լաստիվերտցի, էջ 79։
[2] Նույն տեղում, էջ 79—79։
[3] Նույն տեղում, էջ 79։

եդան, եւ ցորենոյ բազմապատկութիւն, որով երկիր պղծի եւ արգելու զարգանդ աո ի տալոյ զպտուղ»... «Որ խաբէր զընկերն, պարծէր իմաստուն գոլ, և որ յափշտակէր ասէր՝ Ես հզօր եմ։ Զտունս տնանկից աղքատացն, եւ զսահմանս անդաստանաց նոցա յափշտակէին մեծատունքն...»[1] և այլն։

Հողը և երկրի հարստությունները վաշխառության, գողության, կաշառակերության և այլ ճանապարհներով կենտրոնանում էր ոչ միայն վաշխառուների, առևտրական դասի ու ազնվականության, այլև շահագործող դասերի ճնշումը ամրացնող եկեղեցու ձեռքում։ Հոգևորականությունը «հոդու փրկության» քողի տակ մեծ միջոցներ և առաջին հերթին կալվածներ ու շինականներ էր կորզում թագավորական ու նախարարական տներից, և իր նիստ ու կացով ու կենցաղով, շվայտությամբ, անառակությամբ ետ չէր մնում աշխարհիկ իշխողներից։

Բագրատունիների տիրապետության շրջանում, մեկը մյուսի հետևից երկրի տարբեր մասերում բարձրանում են վանքերն ու եկեղեցիները, շրջապատվելով այգիներով, արոտավայրերով ու այլ կալվածքներով։ Վանքաշինությունը առանձնապես աչքի է ընկնում 10-րդ դարում։ Արաս թագավորի ժամանակ կառուցվում են Կամրջաձորի վանքը Արշարունիքում, Հոռոմոսի Դպրեվանքը Շիրակում, Խլաձորի վանքը Դերջանում, կառուցվում են Հնձոցի (Կարինի), Ցախաց քարի (Վայոց Ձոր), Տաթևի, Նարեկի (Ռշտունիք) և նման տասնյակ վանքեր։

Վանքերի և եկեղեցիների շինարարությունը չթուլացնող թափով շարունակում է Աշոտ 3-րդը (953—977)։ Նրա իշխանության ժամանակ կառուցվում են Հաղպատի և Սանահինի վանքերը։[2]

Քաղաքներում և գյուղերում կառուցված եկեղեցիներից հիշատակության արժանի են Կարսի եկեղեցին, Անիի կաթողիկեն և Ս. Գրիգորի եկեղեցին, Արգինայի եկեղեցին և շատ ուրիշները, որոնք հասկանալի է, կառուցվում էին կամ վերաշինվում ծանր շահագործման միջոցով, աշխատավորության գառն բրտինքի հաշվին։

Վանքերի կառուցման զուգընթաց աճում է նաև վանականների թիվը, նրանք խմբերով լցվում էին այսպես կոչված եղբայրանոցները և նոր բեռ դառնում աշխատավորության առանց այն էլ կորացած մեջքին։

Արասի օրոք, վկայում է Ասողիկը՝ «ծաղկեալ պայծառանայր կարգ կրօնաւորական հանդիսից յաշխարհիս Հայոց։ Ու ի յոլով տեղիս շինեցան եղբայրանոցք, եւ ժողովեցան միաբանակեայք սիրովն Քրիստոսիւ։»[3]

Վանքերում ապաստանած կրոնավորների թիվը հարյուրների էր հասնում։ Վանքի կամ եկեղեցու կարողությունն ու ազդեցությունը չափվում էր ոչ միայն նրա ունեցվածքով, կալվածների ու շինականների քանակով, այլև վանա-

[1] Լաստիվերցի, էջ 79—80։

[2] Վանքաշինարարության մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում Ասողիկը (էջ 173—176)։

[3] Այս շրջանում կառուցված կամ վերանորոգված վանքերի թվին են պատկանում նաև Վարագա վանքը, Ձորավանքը (Վանի մոտ), Ապարանայց վանքը, Մարմաշենը, Սևանը, Ագթամարի Ս. Խաչը և այլն։

[4] Ս. Տաթևացի, էջ 173։

կանների թվով։ Տաթևի վանքի միաբանները, օրինակ, ըստ Ստեփանոս Օրբելյանի վկայության բաղկացած են եղել հինգ հարյուր եղբայրներից։[1]

Գործաբույծների այս վիթխարի քանակը, որը ոչ մի հանրօգուտ աշխատանք չէր կատարում և կերակրվում էր աշխատավորության հաշվին, նվիրատվությունների, գնումների, առևտրի ու վաշխառության միջոցով իր ձեռքն էր կենտրոնացնում ոչ միայն հողը, այլև փողը։ Բացարձակորեն թալանվում էր գյուղացին, բռնի ուժով տեղահանվում իր հայրենի ավանից, գյուղից և կամ բռնի «գնումների» միջոցով զրկվում էր հողակտորից։

Գյուղացիների տեղահանման, վանքերի կողմից նոր հողային տարածությունների գնման ու նվիրաբերությունների մասին հարուստ տեղեկություններ է հաղորդում Ստեփանոս Օրբելյանը։ Սյունյաց իշխանուհի Սոփիայի կողմից Գնդեվանքին նվիրած գյուղերի մասին թողած արձանագրության մեջ, օրինակ, կարդում ենք հետևյալը.

«Ես Սոփիա տիկին՝ կին Սմբատայ աստուածապահ տեառն Սիւնեաց եւ Դուստր Գրիգոր Դերենիկի, շինեցի զեկեղեցիս (խոսքը Գնդեվանքի մասին է) ի յիշատակ հոգւոյ իմոյ եւ յարեւշատութիւն իշխանաց իշխանին Սմբատայ եւ որդեկաց մերոց. եւ զարդարեցի զսա մեծածախ սպասիւք. եւ ետու զերկու գիւղս, ի ժառանգութիւն սմա, զոր մի ոք իշխեսցէ խախտել կամ հանել ի սուրբ եկեղեցւոյս, ապա թէ ոչ անլուծանելի նզովիւք անիծեալ լիցին յԱստուծոյ եւ յաստուածագումար սրբոցս, մատանի էր անակն Վայոց Ձոր, շինեցի զսա եւ եդի ակն ի վերայս։»

Ավելի մեծ քանակի գյուղեր, արոտավայրեր, կալվածքներ է ստանում Տաթևի վանքը (կառուցված 895—907 թ. թ.), որի եպիսկոպոս Հակոբի եռանդի ու ջանքերի շնորհիվ Սյունաց տերերը մեծ առատաձեռնություն են ցուցաբերում նվիրելով վանքին հսկայական տարածություններ։

Ստ. Օրբելյանի Պատմության «Վասն ժառանգութեան եկեղեցւոյն եւ հայրապետացն զորս ետուն թագաւորքն եւ իշխանքն. եւ սահման վանիցն զոր գտաք դրեալ ի վերայ մագաղաթի եւ կնքեալ արքունական մատանեաւ» գլխում Տաթևի վանքի մասին կարդում ենք. «Ընծայէ թագաւորն ի սուրբ եկեղեցին զմեծ աւանն Կարճաւան յԱրևիք գաւառի, ի Մեղրաձորի ընդ գնոյ ստացեալ, գնէ եւ զՀարժիս ի տէրանց Սիւնեաց եւ զայն եւս ընծայէ ազատ յամենայն հարկաց, տայ եւ ի Գեղաքունի, ի Սօղից գաւառի գեղորասան կիրակ եւ ի Գառնոյ ձորի զԳոտող վանսւ Տայ եւ Աշոտ՝ գահերէց իշխանն Սիւնեաց, զՅողունի գիւղ ի Հաբանդ գաւառի եւ զԲնունիք ի Սիւնիս, ի Ծղկուք գաւառի, շնորհէ եւ զՅուր բերդովն եւ ագարակօքն եւ զգետն Ցուրայ եւ զվանքն, զՏանձատափ եւ զԳեղձաձորն. տան եւ Բաղացիքն զՏաշու փոխեալ ընդ այլ գեղոյ յԱշոտոյ, տան եւ զՆղէգս գեօղ ի Բաղք գաւառի. տան եւ Սուփանեանք, զԱրիտ գեօղ սահմանակից Հարժէից եւ Տամալեկուց. տան Լւ յետոյ ի Գեղաքունի զԿակոյս գիւղ ազատ ամենայն հարկաց. շնորհէ եւ մեծ բարեպաշտուհի տիկինն Սիւնեաց զԾածարդ եւ զՔարատնիս։

Եւ գրեն այսմ ամենայնի կտակ առաջի մեծ ժողովոյն եւ կաթողիկոսին.

[1] Ստ. Օրբելեան, «Պատմութիւն նահանգին Սիսական», Թիֆլիս, 1912 թ. էջ 228։

[2] Նույն տեղում, էջ 261—262։

եւ ահագին նզովիւք փակեն սոսկալի եւ սարսափելի դաշամբք. եւ կնքեն զթուղթն վարազադիր մատանեաւ թագաւորին եւ կաթողիկոսին և իշխանացն, եւ աւանդեցին ի ձեռն տեառն Յովհաննիսի Սիւնեաց եպիսկոպոսի»։[1]

Պատմիչները բազմաթիվ տեղեկություններ են հաղորդում ոչ միայն նվիրատվության, այլև վանքերի ու եկեղեցիների կողմից գյուղերի հողային տարածությունների, ջրերի ու անտառների գնման մասին։ Ստ. Օրբելյանն իր Պատմության մեջ փաստաթղթեր է մեջ բերում Հաչկոր եպիսկոպոսի կողմից 12.000 դրամով և մի պատվական գոհարով «Վարարակ ջրի» (ջրանցք) Ֆիլիպպ իշխանից գնելու մասին և Համանման բազմաթիվ այլ փաստաթղթեր։ Լիակատար տեր դառնալով հողային մեծ տարածություններ ջրող այդ ջրանցքին, Տաթևի վանքը մի շարք գյուղերի գցում է հարկադրական տնտեսական կախման մեջ իրենից։ Ջրանցքի գնման կալվածագրի մեջ ասված է, որ «... չկա Նորնցեաց կամ Խոտանանեցեաց կամ Շնհերաց եւ Հալեցեաց յայդ ջրոյդ հաշիւ ոչ շատ եւ ոչ սակաւ, ոչ յարտ հատանել և ոչ ի մարդ զատել, որ մարդ եւ անասուն ջուր ըմպեն ի մատակէդ ...։ Ուրեմն, վերոհիշյալ չորս գյուղերը զրկվում են այդ ջրից որևէ չափով օգտվելու իրավունքից, ուստի և ընկնում են ջրի տիրոջից (Տաթևի վանքից) տնտեսական հարկադրական կախման մեջ։ Հասկանալի է, որ նրանց ջուրն ստանալու պահանջից դրդված ստիպված պետք է լիներին անարդարացի ու թալանչիական գործարքի մեջ մտնել հոգևոր ֆեոդալի հետ. և հսկայական հարկերի ու տուրքերի միջոցով միայն ստանալ մինչ այդ իրենց պատկանող ջրից օգտվելու իրավունքը։

Օգտվելով եկեղեցիների և վանքերի տնտեսական ու իրավական հզորությունից՝ դրամ դիզելու, ինչպես և հսկայական կալվածքների տեր դառնալու մարմաջով են բռնվում նաև անհատ հոգևորականները, հատկապես եկեղեցու ամենաբարձր պաշտոնյաները (կաթողիկոս, եպիսկոպոսներ, վանահայրեր և այլն)։

Խոշոր հողատեր ու կալվածատեր է եղել՝ Անին բյուզանդացիներին վանող, հայ պատմության մեջ դավաճանի համբավ թողած, ժամանակի կաթողիկոս, Պետրոս Գետադարձը (1019—1058)։ Նա Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ «Ունէր կազմութիւն՝ հայրենեաց՝ տուեալ ի թագաւորացն Հայոց՝ հինգ հարիւր գեւղ, անուանի եւ մեծանիստ եւ շահաւէտ ընտիր, ընտիր»։

Հարյուրավոր գյուղերից բացի նրա հայրենի սեփականությունն էր «Սուրմառի բերդավանի նման նշանավոր կալվածքը»։

Կալվածքների հետ միասին, Պետրոսը ժամանակի ոգուն համապատասխան աշխատել է միաժամանակ կուտակել դրամ և մեծ քանակությամբ դանձ։

«Քանզի,— ինչպես վկայում է Ա. Լաստիվերտցին,— յոյժ սիրող էր դանձուց Պետրոսայ»։[5]

Հարստություններ կուտակելու մեջ ու արծաթասիրությամբ, կաթողիկոսից ետ չէին մնում նրա ենթականները, դավառատեսուչները, եպիսկոպոսները, որոնց թիվը հասնում էր մոտ 500-ի։

[1] Ստ. Օրբելեան, էջ 228—229։
[2] Նույն տեղում, էջ 256։
[3] Մ. Ուռհայեցի, 1888 թ., էջ 138։
[4] Կ. Կոստանեան, Տէր Պետրոս Ա. Գետադարձ, 1897, էջ 18։
[5] Ա. Լաստիվերտցի, էջ 89, գլուխ ԺԳ։

Նկարագրելով սելջուկ թուրքերի կողմից անպարիսպ ու անպաշտպան Արծն քաղաքի գրավումն ու կողոպտումը, Մատթեոս Ուռհայեցին տեղեկություն է տալիս քորեպիսկոպոս Դավթուկի ունեցվածքի մասին, նա գավառատեսուչ էր ու անազնիվ, խարդախ ճանապարհներով կուտակել էր հսկայական նյութական միջոցներ.

«Թայց զայս բաղում անգամ լուեալ է մեր...— գրում է Ուռհայեցին,— յաղագս քորեպիսկոպոսին, որ ասէին Դաւթուկ, եթե զգանձատունն նորա Աբրիհիմն էառ եւ քառասուն ուղտ բարձան զգանձարանս նորա. ութ հարիւր վեցկի (երեք լուծ վեց եզ լծած արօր) եզանց ելանէին տանէ նորա»[1]

Դավթուկը բացառություն չէր, տասնյակ դավթուկներ կաթողիկոսի գլխավորությամբ աշխատավորության թալանի, հողերի գրավման և գյուղացիության ծանր շահագործման գնով ձեռք էին բերում մեծ հարստություններ։ Նրանցից շատերը զբաղվում էին վաշխառությամբ (այդ մասին տեղեկություններ կան միջնադարյան կանոններում), իսկ ոմանք, անգամ հոգևոր կոչումից զատ ստանձնում էին աշխարհական զանազան պաշտոններ, անգամ դառնում հարկահավաք։

Այս տեսակետից բացառիկ արժեք է ներկայացնում Մատենադարանի № 838 ձեռագրի տվյալը, որը վերաբերում է մեզ հետաքրքրող ժամանակաշրջանին։ Այնտեղ քահանաների մասին կա հետևյալ կանոնը.

«... Մի ոք ի քահանայից հոգաբարձու քաղաքի կամ գեղջի լինիցի կամ գաւառապետ աշխարհական իշխանաց կամ գրող հարկաց կամ գրողաց կամակից, կամ այլ ինչ գործակալութիւն աշխարհի...»։[2]

Վարելով մեկտեղ և եկեղեցական և աշխարհական պաշտոններ, հոգևորականներից շատերը կարողանում էին ժողովրդի արյան ու քրտինքի գնով կուտակել հսկայական նյութական միջոցներ։

Երկրի ներսում պատրաստվող և հեռավոր երկրներից ստացվող փարթամության ու շքեղության առարկաներով, համեմունքներով հեղեղված շուկան պահանջում էր միջոցներ։ Գնման ու փոխանակման միջոցները, առաջին հերթին դրամը, դարձել էր նոր աստված։ Դրամական տնտեսությունը փոխել էր մարդկանց հոգեբանությունը, նրանց մտածելակերպը, բարքերը։ Մարդիկ ընկնում էին ամենա տեսակ միջոցի հետևից, միայն թե կարողանան շահ ստանալ։

Կալվածատիրության ու հոգևորականության հետ մեկտեղ չարաշահումների ու անլուր շահագործման դուռ է բացվում նաև վաշխառուների ու առևտրականների համար։

Մանր հարկեր վճարելու համար գյուղացին ստիպված էր շուկա հանել իր ստացվածքի մի մասը, առանց գյուղատնտեսական ապրանքների վաճառքի անպատկերելի է բազմահազար բնակչություն ունեցող քաղաքների կյանքը։ Եվ գյուղացին ստիպված է լինում ամենօրյա կապերի մեջ մտնել ներքին շուկան գյուղատնտեսական ապրանքներով բավարարող, գյուղի ու քաղաքի միջև առևտրական գործարքներ կատարող առևտրականների հետ և իր արդյունքի մի զգալի մասը, ուղղակի և անուղղակի ճանապարհներով զոհել հօգուտ առևտրականի։

---

[1] Մ. Ուռհայեցի, «Ժամանակագրութիւն», էջ 103։
[2] Մատենադարանի ձեռագիր № 838, էջ 119 բ։

Եվ նույն առևտրականը կամ նրա դասին պատկանող մի այլ ներկայացուցիչ հարմար առիթի է սպասում գյուղացուն գցելու վաշխառուական իր ոստայնի մեջ։ Վաշխառուն, որ միջոցներ է կուտակում ու հարստանում ժողովրդի թշվառություններից, ինչպես նկարագրում է 7—8-րդ դարու հեղինակ Հովհան Մայրավանեցին[1] ամեն օր աղաչում է աստծուն, որ երկրում լինի ակարոտություն և տարակուսանս և սովս սաստիկս և հարկապահանջս աշխարհիս»,- որովհետև սովի և ծանր հարկերի ժամանակ խեղճ գյուղացին ստիպված ձեռք է կարկառում նրան և խնդրում հրեշավոր տոկոսներով պարտք։ Նրանք, այդպիսով «զարծաթս իւրեանց ի վաշխառու տան, և տոկոսեօք անդէն պահանջէն, և անակնածելի ուտեն զմարմինս տնանկաց և ըմբեն զարիւն նոցա անողորմս»։[3]

Ցցելով իր ճիրանների մեջ խեղճ գյուղացուն, վաշխառուն աստիճանաբար քամում է նրա կենսական հյութերը, ստիպում է վաշխի դիմաց տալ իր անասունները, ունեցվածքը և ողջ կարողությունները։

Մեզ հասել են բավականաչափ տվյալներ նաև բնամթերքի վաշխառության մասին։ Անբերրիության տարիներին նույն վաշխառուները կամ ունևոր մարդիկ ցորեն են տալիս սովամահության վտանգի առաջ կանգնած գյուղացուն (վաշխառության այս ձևի մասին խոսում է Ա. Լաստիվերացին, անվանելով այն «ցորենի բազմապատկություն»), իսկ հետագայում տեր դառնում նրա քրտինքի գնով վաստակած արդյունքին։

Այսպիսով, 9-րդ դարից սկսած Հայաստանի էկոնոմիկայում և սոցիալ-տնտեսական հարաբերություններում նկատելի են մի շարք արմատական փոփոխություններ ու տեղաշարժեր։ Այդ նոր հարաբերությունների ոլորտում սրվում են դասակարգային ու դասային հակամարտություններն այն աստիճան, որ երկիրը հղի է դառնում սոցիալական բախումներով ու գաղափարների սուր գոտեմարտերով։ Բոլոր դասակարգերի առաջ ծառանում են հարցեր ու պահանջներ, որոնց լուծման ճանապարհը սոցիալական ակտիվ պայքարի կամ հնի պաշտպանության համար մղվող պայքարի ճանապարհն է։

Մանրթանանք այժմ, թե ի՞նչ վիճակ էին ապրում և ինչպիսի հարաբերության մեջ էին միմյանց հանդեպ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի հասարակական շերտերն ու դասակարգերն առանձին-առանձին վերցրած։

Խոշոր կալվածատերեր (նախարարներ), դեռ շատ վաղ ժամանակներից, տեր էին դարձել մեծ հողային տարածությունների, ստանալով դրանք ժառանգաբար կամ ձեռք բերելով պատերազմների ու գնումների միջոցով։ Նրանք գրեթե անկախ էին թագավորից։

Նախարարական տների ձեռքում եղած հողային տարածությունները, անտառներն ու արոտավայրերը, հաշվվում էին ոչ թե հարյուր կամ հազար հեկտարներով, այլ մի քանի, նույնիսկ տասնյակ հազարներով։ Առանձին նախարարական տներ (անցյալում Մամիկոնյան, Մարդպետունի, Սահառունի և այլն, այս շրջանում Արծրունի, Պահլավ, Սյունի), տիրում էին ամբողջ եր-

[1] Նրա հատերը մեզ հասել են ձեռագրերով որպես Հովհ. Մանդակունու հեղինակություններ, բայց գիտության մեջ արդեն ցույց է տրված և ապացուցված դրանց իսկական հեղինակը։ (Տես «Շողակաթ» ժողովածու, 1912 թ., էջմիածին. Գ. Տեր-Մկրտչյանի հոդվածը)։

[2] Տես Յովհ. Մանդակունւոյ Հայոց հայրապետի ճառք, Վենետիկ, 1836 թ., էջ 53։

[3] Նույն տեղում, էջ 52։

կրների ու երկրամասերի, նրանք իրենց ունեցվածքով ու կալվածքներով չէին զիջում թագավորական տան ներկայացուցիչներին, իսկ առանձին դեպքերում նույնիսկ գերազանցում էին նրանց։ Տնտեսական այս հզորությունը նրանց հնարավորություն էր տալիս իշխելու նաև քաղաքական կյանքում։ Նախարարներն իրենց երկրներում ինքնիշխան էին։ Ըստ իրենց հայեցողության, նրանք հարկ էին նշանակում, քմահաճորեն դրամ ժողովում, պատերազմում հարևանների հետ, դատում, վճիռներ կայացնում և այլն։ Ունենալով անսահմանափակ իշխանություն՝ նախարարներն իրենց երկրամասի ինքնիշխան տերերն էին։

Չնայած այն բանին, որ արաբները մեծ հարված հասցրին հայ նախարարական տներին և պատմության բեմից անհետացրին մի շարք խոշոր ընտանիքներ, այնուամենայնիվ այս շրջանում Բագրատունիների ուժեղացման ու արաբական խալիֆաթի թուլացման պայմաններում որոշ նախարարական տներ կարողանում են վերականգնել իրենց քաղաքական ու տնտեսական իրավունքները, անգամ տեր դառնալ նոր կալվածքների և իշխող դեր խաղալ երկրի կառավարման գործում։

Նրանք իրենց բոլոր ձգտումներով ու շահերով կապված լինելով ֆեոդալական կարգերի հետ, ինչ խոսք, որ պետք է հանդես գային այդ հարաբերությունների անփոփոխ պաշտպանության և ամեն տիպի ռևոլուցիոն շարժումների ճնշումը գլխավորողի դերում։ Սակայն նրանցից ոմանք զուտ նեղ-ֆեոդալական-անձնական շահերից ելնելով, երբեմն, ժամանակավոր կոմպրոմիսներ կարող էին կնքել տիրող կարգերի դեմ օպոզիցիոն տրամադրություններ ունեցող շերտերի ամենապահպանողական ներկայացուցիչների, ինչպես նաև օտար պետությունների հետ, կենտրոնական իշխանության դեմ մղվող կենտրոնախույզ իրենց ձգտումների իրականացման և օր ավուր հզորացող եկեղեցական հողատիրության առաջն առնելու համար։

Պետք է, սակայն, չմոռանալ, որ եկեղեցու տնտեսական հզորության դեմ եղող բողոքները խոշոր ֆեոդալների կողմից, որոնց մենք ականատես ենք շատ վաղ ժամանակներից, ոչ մի դեպքում չի կարելի դիտել որպես եկեղեցու դեմ մղվող պայքար։ Այդ դժգոհություններն ու ելույթները հետաքրքիր են իշխող ֆեոդալական դասի ներսում եղող հակասությունների ու ներդասակարգային բախումների ուսումնասիրության տեսակետից։ Բայց որոշ դեպքերում այդ հակասությունները կարող էին օգտագործվել և օգտագործվում էին օպոզիցիոն դասերի կողմից, որովհետև դրանք վերջին հաշվով թուլացնում էին ֆեոդալական հարաբերությունների մոլի պաշտպանների բանակը՝ ներսից։

Մանր ազնվականները քանակով ավելի շատ էին, քան նախարարները, բայց ընդհանուր հողային տարածություններով և ունեցվածքով բավականին զիջում էին առաջիններին։ Լինելով ավելի փոքր ուժի և միջոցների տեր, նրանք երկրի անտեսական ու քաղաքական կյանքում չէին կարողանում հանդես գալ ինքնուրույն ձևով, այլ մեծ մասամբ ենթարկվում էին նախարարներին, դառնում նրանց ձեռքին զենք՝ թագավորական կամ նախարարական այլ տների դեմ մղած նրանց պայքարի ժամանակ։

Ունենալով ավելի փոքր հողակտորներ, նրանք մեծ մասամբ տնտեսական կախման մեջ էին նախարարներից և հաճախ զրկվում էին իրենց հողակտորներից, կուլ գնալով խոշոր կալվածատերերին կամ եկեղեցուն։ Մանր ազնվա-

կանության դրությունն ավելի է ծանրանում, երբ գնումների ու նվիրատվությունների միջոցով վանքերին ու եկեղեցիներին են անցնում հողային հսկայական տարածություններ։ Հասկանալի է իհարկե, որ ֆեոդալական այս դասը չէր կարող պասիվ դիտողի դերում հանդես գալ երկրի սոցիալ-տնտեսական կյանքում կատարված խոշոր իրադարձությունների հանդեպ։

Ֆեոդալական տիրող դասակարգի մեջ հոգևորականությունը օր ավուր հզորանում էր և տնտեսապես և թվական տեսակետից, շնորհիվ վանքերի ու եկեղեցիների շուրջը կատարվող և հարաճող հսկայական տնտեսական միջոցների։ Բայց այս դասը ևս միատարր չէր. նրա մեջ մտնում էին իրենց տնտեսական ու քաղաքական վիճակով շատ տարբեր երկու թևեր. ա) բարձրաստիճան հոգևորականություն (կաթողիկոս, եպիսկոպոսներ, վանահայրեր և այլն) և բ) գյուղական քահանաների, սարկավագների ու դպիրների մի բազմամարդ շերտ, որն իր առօրյայով կապված լինելով աշխատավոր ժողովրդի հետ, գործելով նրա հետ մշտական շփման պայմաններում, որոշ դեպքերում հանդես էր գալիս աշխատավորների բանակում, իր բողոքի ձայնը միացնելով աշխատավորների ձայնին։

Բարձրաստիճան հոգևորականությունը, դրան հակառակ, ոչ մի բանով չէր տարբերվում հզոր ֆեոդալներից։ Իր նիստ ու կացով, սոցիալական ծագումով ու տնտեսական շահերով նրանք հոգևորականի զգեստ հագած ֆեոդալներ էին, որոնք հանդես էին գալիս ժողովրդական լայն շերտերին անլուր շահագործողների, դժոխքի, աշխարհիկ և եկեղեցական պատիժների սարսափով սանձողների դերում։

Նրանք իրենց հպատակ գյուղացիներին նախարարների, իշխանների և մանր ազնվականների նման ոչ միայն անխնա շահագործման էին ենթարկում, այլ գանձելով մեծ քանակությամբ եկեղեցական հարկեր ու տուրքեր, կրկնակի ծանրացնում էին գյուղացիների վիճակը։ «Եկեղեցիները, ինչպես նկատում է Ֆ. Էնգելսը,— բռնության ու շահագործման հետ միասին գործի էին դնում կրոնական բոլոր հնարքները, շարժման մեջ էին դնում բանադրանքի երկյուղը, մեղքերի թողությունը, մերժումը և խոստովանության բոլոր ինտրիգները, երանավետ ուխտագնացությունները, մասունքների արտադրությունը, մատաղը, պսակը, այս կամ այն տոնի հետ կապված պատարագները, որպեսզի դրա միջոցով կարողանային աշխատավորներից քամել նրա վերջին ստակը և այդ միջոցով ավելացնեին եկեղեցու և իրենց անձնական հարստությունները։ Ոչ միայն աշխատավոր գյուղացիության, այլև ազնվականության որոշ շերտերի կողմից դեպի հոգևորականությունը տածած ատելությունն ուղղված էր դեպի այս դասի՝ բարձրաստիճան հոգևորականությունը»։ Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի բարձրաստիճան հոգևորականության բարքերի այլասերվածության, շահագործման, կաշառակերության ու խարեբայության մասին շատ բնորոշ տեղեկություններ է հաղորդում Մատթեոս Ուռհայեցին։ Երբ Հովհաննես-Սմբատ թագավորը և Պետրոս Գետադարձ կաթողիկոսը իշխաններից կազմված մի պատվիրակություն են ուղարկում Սևան, ժամանակի հռչակավոր վարդապետ Հովհաննես Կոզեռնի մոտ, իմանալու համար 1022 և 1036 թվականների արեգակի խավարման ու երկրաշարժի պատճառները, վերջինս հայտնում է, որ աշխարհի վերջը մոտեցել է, սատանան արձակվել է կապանքներից և այլն։ Այդ պատասխանի մեջ տրված է ժամա-

նակի բարքերի շատ հետաքրքիր նկարագրություն, որի հետ անհրաժեշտ է հատվածաբար ծանոթանալ։

«Եւ ահա յայսմհետէ,— հայտնում է Հովհ. Կողեռնը,— ոչ ոք կարասցէ կալ հաստատուն ի հաւատս Քրիստոսի եւ ի պատուիրանսն Աստուծոյ, ո՛չ հայրապետ և ո՛չ վարդապետ, ո՛չ եպիսկոպոս, եւ ո՛չ քահանայ, ո՛չ աբեղայ եւ ո՛չ կրօնաւոր, ո՛չ իշխան եւ ո՛չ ժողովուրդ. իշխանք յարեանն ի գողս եւ յաւազակս և յափշտակողս, դատաւորք ի կաշառս եւ յանիրաւ դատաստանս, կրօնաւորք թողուն զանապատս և զմենաստանս, եւ յաշխարհի զբազմունս դեգերին եւ շրջին ընդ փողոցս, եւ ի մէջ կանանց, առեն զաղօթս եւ թողուն զկարգս կրօնաւորութեան իւրեանց, սիրեն զվարս աշխարհի եւ զհետ երթան դովեստից մարգկան, որոճալով որոճեն զդիւական երգս... այլև իշխանք պիղծ եւ մեծ ախտիւ յանդգնեալ եւ մոլորեալ... միշտ եւ հանապազ ի գինարբուսն գեգերին վասն սիրոյ եւ ցանկութեան... Հայրապետք եւ եպիսկոպոսունք եւ քահանայք եւ կրօնաւորք արծաթասէր»... և այլն։ Այսպիսի մռայլ գույներով է նկարագրում 11-րդ դարի հայ հասարակությունը Կողեռնը, և ապա շարունակում է. «Եւ ահա յայսմհետէ բազում հերձուածք մտանեն յեկեղեցի... Յաղագս արծաթոյն թողուն ի բաց զհաւատն... Վասն զի մեղսասէրք և ցանկացողք լինելոց են... Առաջնորդք և իշխանք լինելոց են դաշառասէրք եւ ստախօսք եւ սուտերդմունք, եւ ի ձեռս կաշառացն թիւրեն զդատաստանս իրաւանցն ալքատին... իշխանք եւ դատաւորք պոռնկասէրք... և ատեցողք... Մեծարեն զմատնիչսն և զգողսն, յափշտակեն անիրաւաբար զաշխատողաց զինչսն... Յաղագս արծաթասիրութեան տան ձեռնադրութիւն բաղում ռնարժանից, եւ զամենայն պղծեալսն ածեն ի կարգ քահանայութեան... բազումք ի քահանայից ի կրօնաւորաց... լինելոց են ցանկասէրք, ախտից փափաղողք, որոճալով որոճեն զերգս դիւական... Յղփանան առաջնորդք աշխարհի սրծաթասիրութեամբ»։

Այս վկայությունից պարզ երևում է, թե ինչ չափերի են հասել բարքերի այլասեռությունը, թե ինչպես արծաթի համար անառակությունը, մատնիչությունը, ավազակությունը մեծարվում էին իշխանների ու հոգևորականների կողմից։ Հոգևորականների ձեռքով հափշտակվում էր աշխատավորների ունեցվածքը, փողի ուժով գողերն ու քրեական հանցագործները ձեռնադրվում էին քահանա և անասելի շահագործման ենթարկում բազմաշարշար ժողովրդին։

Կղերականության հիերարխիայի ստորին աստիճանների վրա, ինչպես ասացինք, կանգնած էր եկեղեցական անսպառ հարստություններից ու կալվածքներից մասն չունեցող, կամ միայն փշրանքներ ստացող տիրացուների և գյուղական քահանաների բանակը։ Նրա մի սաստ, շնորհիվ իր գյուղացիական ծագման և կյանքի պայմանների, ավելի մոտ էր կանգնած ժողովրդական զանգվածներին, ուստի այս շրջանի ազանդավորական և սոցիալական շարժումների ժամանակ ցածրաստիճան հոգևորականությունն իր շարքերից տալիս էր ոչ քիչ թվով շարժման մասնակիցներ։

9—10-րդ դարերում արդեն իրեն զգացնել էր տալիս առևտրական դասը, որն իր տնտեսական կապերով ու դիզած նյութական միջոցներով հանդիսանում էր երկրի առևտրի ու փոխանակության կազմակերպիչը և տնօրինողը։

Միատարր չէր նաև այս դասը, նախ հանդես էին գալիս առևտրականներ,

[1] Մ. Ո. ռ հ ա յ ե ց ի, «Ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898, էջ 53—55, 69, 71։

որոնք ամենօրյա սերտ կապերի մեջ էին արևելյան և արևմտյան մի շարք երկրների հետ։ Նրանց առևտրական գործարքների ոլորտի մեջ էին մտնում Բյուզանդիան, Միջագետքը, Եգիպտոսը, Պարսկաստանը և անգամ հեռավոր Հնդկաստանն ու այլ երկրներ։ Դրանց կողքին կար միջին առևտրականների մի ստվար խավ, որոնց առևտրական կապերն ու գործարքները չէին դուրս գալիս ներքին շուկայի սահմաններից և պարփակվում էին քաղաքով ու շրջակա գյուղերով։

Առևտրական աշխույժ հարաբերությունների պայմաններում, երբ դրամը զգալի ուժ է դառնում տնտեսության բոլոր ճյուղերում, առևտրականությունը, ինչպես առիթ ենք ունեցել արդեն նշելու, միաժամանակ զբաղվում է վաշխառությամբ։ Հաճախ նրա հյուսած ոստայնի մեջ են ընկնում նաև մանր ազնվականության (երբեմն անգամ՝ խոշոր կալվածատերերի) ներկայացուցիչները, որոնք շքեղ ու շվայտ կյանքով ապրելու համար, ստիպված էին լինում երբեմն նույնիսկ գրավ դնել իրենց կալվածքների մի մասը, իսկ երբեմն անգամ վաճառել։ Սակայն երկրի քաղաքական կյանքում առևտրականները խաղում էին չափազանց ցածր դեր, համեմատած իրենց տնտեսական դիրքի հետ։ Նրանց ունեցվածքն ու կարողությունը ուժեղ ֆեոդալի կողմից բռնագրավվելը վտանգից զերծ չէր և սրի ու իշխանական բռնության առաջ շատ հաճախ տեղիք էր տալիս։ Առևտրականները, որպես ֆեոդալական հարաբերությունների ծոցում աճած նոր դաս, շահագրգռված էին և ձգտում էին ստեղծել իրենց կուտակած հարստությունները հանգիստ ու խաղաղ վայելելու սոցիալ-քաղաքական պայմաններ, ուստի և մասնակցություն ունենալ երկրի կառավարման գործում։

Հայաստանի քաղաքներում իշխող դասերի հետ մեկտեղ կենտրոնանում էր նաև արհեստավորությունը, որը սպասարկում էր ներքին ու արտաքին շուկան բարձր արվեստով արտադրված ապրանքներով։ Արհեստավորության մեջ նույնպես նկատելի է շերտավորում։ Վարպետներն իրենց շահագործող և իշխող դիրքով, ենթավարպետները սահմանափակ իրավունքներով, իսկ աշակերտները վարպետներից և ենթավարպետներից կախյալ վիճակի մեջ, ենթակա էին ծանր շահագործման և իրավազրկության։ Ակադեմիկոս Ն. Յա. Մարի Անիում կատարած պեղումների արդյունքները և հետագա հետազոտությունները հիմք են տալիս ենթադրելու համքարությունների առկայության մասին Հայաստանում, սակայն արհեստավորական համքարությունների ներքին կյանքի, նրանց տնտեսական վիճակի ու քաղաքական դիրքի մասին, նամանավանդ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, դեռևս շատ խնդիրներ մնում են չուսումնասիրված և առեղծվածային վիճակում։

Բագրատունիների շրջանում նկատելի է դառնում, ստվարանում է հասարակության այն շերտը, որը զրկվելով ունեցվածքից և չունենալով որոշ պրոֆեսիա, թափառական կյանք էր վարում և քաղաքներում մուրում աշխատանք ու հաց։ Նրանց մի մասն իրոք կարողանում էր սեզոնային աշխատանքի վարձվել՝ քաղաքներում շինարարությունների վրա, գյուղերում գյուղատնտեսության աշխատանքների եռուն օրերին, սակայն՝ մեծագույն մասն իր դառն կյանքը գլխավորապես անց էր կացնում մուրացկանությամբ։

Նախկին ֆեոդալական քաղաք-ամրությունը աստիճանաբար փոխում էր իր կերպարանքն ու դառնում հիմնականում առևտրի ու արհեստագործության

կենտրոն։ Քաղաքներում ստեղծվում է դեմոկրատիկ հոսանք ֆեոդալների և իշխանների դեմ։ Անիում և, կարելի է ենթադրել, նաև Հայաստանի մի շարք այլ քաղաքներում, Բագրատունիների վերջին շրջանում սաղմնավորվում և տառաջ է գալիս քաղաքային ինքնավար կյանք, քաղաքային ինքնավարություն, քաղաքների ավագների գլխավորությամբ և օրենսդրական իշխանությամբ՝ քաղաքի սահմաններում»։[1]

Քաղաքի կառավարողը, նրա ներքին գործերը տնօրինողը, արդեն ոչ թե ֆեոդալն էր կամ իշխանը, այլ ավագների խորհուրդը։

«Ավագները խորհուրդը վարում էր քաղաքի բոլոր գործերը»,[2]— գրում է միջնադարյան հայկական քաղաքների ներքին կյանքի լավագույն գիտնական ակադեմիկոս Ն. Մառը։

Ինքնըստինքյան հասկանալի է, որ քաղաքների ավագների խորհուրդն այն նոր ուժն էր, որ գալիս էր այդ շրջանում մասնակիորեն փոխարինելու ֆեոդալական կառավարման ձևին։ Թեև մենք չունենք ավագների խորհրդի ծագման ու իրավունքների ձեռք բերման համար մղված դոտեմարտերի մասին մանրամասն տվյալներ, բայց եղած նյութերը հնարավորություն են տալիս կռահելու, որ այդ պայքարը նորի և հնի միջև, արդեն առկա էր Բագրատունիների թագավորության վերջին շրջանում։ Ջարդացող առևտրա-արհեստավորական դասը, սոցիալ-տնտեսական նոր հարաբերությունների հետևանքով ձգտում էր դուրս գալ քաղաքական լայն ասպարեզ և ի հաշիվ ֆեոդալների՝ նոր իրավունքների տեր դառնալ։ Քաղաքային ավագների խորհրդում առևտրականներն էին գերիշխում, թե արհեստավորները, այդ չէ կարևորը, էականը կառավարման նոր ձևն է, մի ձև, որն ավելի լայն դեմոկրատիկ խավերի ցանկության արտահայտությունն է և արդյունք է ֆեոդալական հարաբերությունների եթե ոչ փլուզման, ապա անտարակույս՝ խարխլման, որը արդեն հանդես էր գալիս 11-րդ դարի կեսերից։

Որպես ազնվականության և կղերականության հակոտնյա և ընդդիմադիր ուժ, քննարկվող ժամանակաշրջանում ամենաշարքաշ ու դաժան պայմաններում ապրող, և անլուր շահագործման ենթակա աշխատավոր գյուղացիությունն էր, մի դասակարգ, որը իշխող դասակարգին (նախարարներին ու իշխաններին, եպիսկոպոսներին ու արքեպիսկոպոսներին, վարդապետներին, առևտրականներին ու վաշխառուներին) գերակշռում էր ոչ թե ունեցվածքով ու հողային տարածություններով, այլ քանակով։ Այդ ուժի, գյուղացիության աշխատանքի ու քրտինքի միջոցով էին ստեղծվում երկրի ողջ բարիքները, թագավորների ու նախարարների, կաթողիկոսների ու մյուս հոգևորականների զեխ ու փարթամ կյանքը։

Գյուղացին պատկանում էր թագավորի՞ն, իշխանի՞ն, թե եկեղեցուն, այդ հիմնականում միևնույնն էր, ամեն տեղ նրա հետ վարվում էին իբրև մի քաշոլ անասունի։ Տարվա զգալի մասը նա սլարտադիր կերպով անց էր կացնում իր տիրոջ կալվածքի վրա ու մշակում նրա անծայրածիր հողամասերը։

Այդ դեռ բոլորը չէր, բացի սովորական կորվային ծառայությունից գյուղացին իր համար կատարած աշխատանքի արդյունքից, պարտավոր էր վճա-

---

[1] Ն. Մառ, «Անի», էջ 65։

[2] Նույն տեղը։

ռել կալվածատիրոջը՝ հողավարձ, եկեղեցուն՝ տասանորդ, թագավորին՝ գլխահարկ և բազմաթիվ այլ ուղղակի և անուղղակի հարկեր։

Գյուղացին իր ունեցած թոչուններից և մանր ու խոշոր եղջերավոր անասուններից, տարին մեկ երկուսը, երբեմն էլ մի քանիսը ուխտագնացությունների ժամանակ, կամ եկեղեցական հատուկ տոներին պետք է զոհաբերեր հանուն այս կամ այն սրբության։ Այդ բոլորի հետ միասին նա չէր կարող ամուսնանալ և ոչ էլ մեռնել առանց տիրոջը և եկեղեցուն մի բան վճարելու։ Անիում թաղման և պսակի համար քահանաները ստանում էին 100 դրամ, դեռ չհաշված այն հոգեհացը և լրացուցիչ ծախսերը, որը պարտավոր էր անել մեռելատերը կամ ամուսնացողը, համաձայն եկեղեցու կողմից սահմանած կանոնների։[1]

Կալվածատերերի կամ հոգևորականների իշխանությունը կամայականորեն տարածվում էր ոչ միայն գյուղացու սեփականությանը, այլև անձի վրա։ Իշխանն ու եպիսկոպոսն, ըստ իրենց քմահաճույքի, կարող էին գյուղացուն բանտ նետել, մարմնական պատիժների ենթարկել, խարանել և այլն։ Ճնշված, իրավազուրկ գյուղացին անպաշտպան էր գյուղում, նրան դատ տեսնողներն ու պաշտպանները նույն շահագործողներն էին կամ նրանց ներկայացուցիչները։

Նույնիսկ այն դեպքում, երբ գյուղացու ձեռքից բռնի ուժով խլվում էր նրա ունեցվածքը, նրա շնչին հողակտորը եկեղեցու հոդաբաժինների կլորացման համար, նա չէր կարող պաշտպանության դիմել, քաջ գիտակցելով, թե ում կողմն են բռնելու «արդարադատության» պաշտպանները։

Չնայած այդ ծայր աստիճան իրավազուրկ ու անտանելի դրությանը, գյուղացիությունը, այնուամենայնիվ, անկարող էր դիմելու համընդհանուր ապստամբության ընդդեմ տիրող ֆեոդալական հարաբերությունների։ Գյուղացիների ծվատված ու անջատ վիճակն անիրագործելի էր դարձնում միասնական ելույթը։ Միաբան հանդես գալուն խանգարում էր գյուղացիության տգիտությունն ու դասակարգային իր շահերի անտեղյակությունը։

Եկեղեցին, դարեր շարունակ մթագնելով աշխատավորության ուղեղը, քարոզում էր հնազանդություն տերերին և հլու-հպատակություն։ Այդ քարոզները, հանդերձյալ դատաստանի սարսափների հետ զուգորդված, անշուշտ ունենում էին իրենց բացասական հետևանքները և ծառայում էին տիրող դասակարգերի օգտին։ Այս դեռ բոլորը չէր։ Գյուղացիությունն ի վիճակի չէր միացյալ ապստամբություն բարձրացնելու նախ և առաջ այն պատճառով, որ նրա դեմ ծառացած էր նախարարների, իշխանների, հոգևորականների միասնական ուժը։ Անշուշտ ֆեոդալական հարաբերությունների դեմ օպոզիցիոն դիրք էին բռնել նաև առևտրականներն ու արհեստավորությունը, սակայն նրանց շահերը և նպատակները տարբեր ու հակադիր էին։ Առևտրականները ձգտում էին ոչ թե գյուղացիության դրությունը թեթևացնել, այլ ավելի լայն ասպարեզ ու հնարավորություններ ստեղծել նյութական միջոցներ կուտակելու համար, վերջին հաշվով, դարձյալ նույն գյուղացիության զրկանքների գնով։ Այդ է պատճառը, որ ամբողջ միջնադարյան Հայաստանում մենք տեսնում ենք գյուղացիական տեղական ըմբոստացումներ, հուզումներ ու զինված

[1] Տես պրոֆ. Հ. Ջավախիշվիլի, «Նյութեր Հայաստանի սոցիալական շարժումների պատմության համար», 1937 թ., էջ 30։

ելույթներ, բայց համազգային գյուղացիական և ոչ մի ապստամբության մենք չենք հանդիպում։

Այսպիսով 9—11-րդ դարերի Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքում սրվել էին հարաբերություններն իրար հակադիր, հիմնականում երկու բանակների միջև, ֆեոդալական բանակ (ազնվականություն, կղերականություն) և դեմոկրատական բանակ (առևտրականություն, արհեստավորություն և գյուղացիություն)։

Այդ հիմնական երկու իրարամերժ բանակները միատարր չէին, ներդասակարգային սուր բախումների պարարտ հող էր ստեղծվել բանակներից յուրաքանչյուրի, և հատկապես իշխող բանակի շարքերում։ Այդ դասակարգային հակամարտություններն իրենց զգալ էին տալիս մերթ քողարկված ձևով, միստիքական շղարշի տակ, մերթ ֆեոդալական հարաբերությունների ու իդեոլոգիայի բացարձակ ժխտումով, իսկ երբեմն նաև զինված, բայց տեղական մասշտաբի գյուղացիական ելույթներով։

Ավելի քան 150 տարի, 9—11-րդ դարերի ընթացքում, հայ ֆեոդալական բանակը ապրում էր ահ ու սարսափի մեջ գյուղացիական այն հուզումներից ու շարժումներից, որոնք աղանդավորական կաղափարների քողի տակ մղվում էին հանուն արդարացի սոցիալ-տնտեսական հարաբերությունների, հանուն գյուղացիության ծանր վիճակի բարելավման։ Այդ շարժումները հանդես են եկել թոնդրակեցիների շարժման անվան տակ։

* * *

Միջնադարյան գյուղացիական շարժումների հիմնադիրների և ղեկավարների մասին վստահելի, ստույգ տեղեկություններ մեզ չեն հասել։ Ավելի քան հազար տարի շարունակվող ու ծավալվող թոնդրակեցիների շարժման հիմնադիրն ու գաղափարախոսը, ըստ մեր բոլոր պատմիչների ու աղբյուրների, հանդիսանում է ոմն Սմբատ, Ծաղկոտն դավառի Զարեհավան գյուղից։

Ստեփանոս Տարոնեցին (Ասողիկ) Սմբատի մասին գրում է.

«Յաւուրս սորա (Յովհաննիսի կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ) հրևեցաւ Սմբատ Թոնդրակաց առաջինն ի Զարեհաւան գեղջէ, ի Ծաղկոտն գաւառէ, հակառակ ամենայն քրիստոնէական կարգաց»[1]

Գրիգոր Մագիստրոսն իր թղթերում լուտանքներ թափելով Սմբատի հասցեին գրում է. «Սմբատն այն, որ զկնի նորա շունք եւ գայլք առանց քահանայութեան կերպիւ քահանայի, եկեալ ի գաւառէդ Ծաղկոտնէ ի գեղջէ Զարեհաւանէ, եկեալ բնակեցաւ ի Թոնդրակս եւ ուսուցանել սկսաւ զամենայն չորիս բոլորս»[2]

Իսկ Մխիթար Այրիվանեցին համարում է նրան «Սմբատ Արլաբայ», ասելով, որ— «Սա է նախկին թոնդրակեցւոց աղանդին»[3]

Մոտավորապես նույնն են ասում Սմբատի մասին բոլոր այն մատենագրերը, որոնք իրենց գրություններում կանգ են առել թոնդրակեցիների շարժման վրա կամ անհրաժեշտ են գտել խոսել Սմբատի և նրա հետևորդների մա-

1 Ստ. Տարոնեցի, «Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885 թ., էջ 160։

2 Գ. Մագիստրոսի «Թղթերը», Ալեքսանդրապոլ, 1910 թ., էջ 153—154։

3 Մ. Այրիվանեցի, «Պատմութիւն Հայոց», Մոսկվա, 1860 թ., էջ 84։

սին։ Դժբախտաբար Սմբատի մասին կենսագրական ուրիշ մանրամասնություններ, որոնք հնարավորություն կտային մեզ պարզելու այդ վերին աստիճանի հետաքրքրական մեծ գործչի և գաղափարախոսի կերպարը, մեզ չհաջողվեց գտնել։ Չնայած այդ բոլորին, քննելով պատմիչների բոլոր հայհոյական արտահայտություններն իր ժամանակի այդ ռևոլուցիոն գործչի հասցեին, մենք եկանք այն համոզման, որ հանձինս նրա գործ ունենք միջնադարի խոշոր գործիչներից մեկի հետ։ Մի գործիչ, որի կատարած գործի մասին որքան էլ ուշխատել են քիչ խոսել ու շատ հայհոյել կղերա-ֆեոդալական պատմիչները, այնուամենայնիվ ստիպված են եղել աղավաղված ու դիտավորյալ խեղաթյուրված ձևով ներկայացնել նրա քարոզած ու իրագործած ամենաէական գաղափարները։ Կարիք չկա ասել, որ անեծքների ու լուտանքների միջից պատմական ճշմարտությունը վեր հանելու համար անհրաժեշտ է եղել բավական աշխատանք կատարել սկզբնաղբյուրների վրա։ Սմբատ Զարեհավանցու ծննդյան մոտավոր թվականը որոշելու համար, ելակետային ժամանակամիջոց են 9-րդ դարի 90-ական թվականները, 890-ական թ. թ., երբ Սմբատն արդեն քարոզում էր նոր ու առաջավոր գաղափարներ, ուստի բնական է ենթադրել, որ այդ ժամանակ նա արդեն հասակն առած մարդ պետք է լիներ։ Սմբատի գաղափարների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նա կյանքի մեծ փորձ և հարուստ գիտելիքներ ունեցող մի գործիչ էր, իսկ այդպիսին դառնալու համար անհրաժեշտ էր երկար տարիների համառ աշխատանք։ Ուստի չենք սխալվի, եթե ենթադրենք, որ նա 890-ական թվականներին հասուն մի մարդ էր շուրջ 35—40 տարեկան, այլ խոսքով՝ Սմբատը ծնված պետք է լինի 9-րդ դարի 50-ական թվականներին։ Նրա ծննդավայրի մասին մեզ հասած տեղեկությունները միասնական են, բոլոր պատմիչներն էլ Սմբատի ծննդավայրն են համարում Զարեհավան գյուղը, Ծաղկոտն գավառում։ Ծագմամբ պետք է, որ գյուղացի կամ «ազատ» դասին պատկանող մեկը եղած լինի, որովհետև իշխանական կամ հոգևորական ծագում ունենալու փաստը որևէ կերպ կարձանագրվեր պատմիչների կողմից։

Սմբատ Զարեհավանեցին դեռ պատանեկական հասակից իր ծննդավայր Զարեհավան գյուղում հնարավորություն ուներ ականատես լինելու այն անլուր հալածանքներին, որին ենթակա էր հայ աշխատավոր գյուղացիությունը օտարների, սեփական ֆեոդալների և եկեղեցու կողմից։ Ինչպես երևում է, Սմբատը չկարողանալով տանել գյուղի ծանր պայմանները, հեռանում է հայրենի գյուղից, որոշ ժամանակ վարում է թափառական կյանք և ավելի մոտից ծանոթանում ժամանակի դասային, դասակարգային հարաբերություններին և գյուղացիության վիճակին։

880-ական թվականներին գալով Ապահունյաց գավառի Թոնդրակ գյուղը, Սմբատ Զարեհավանցին քարոզում էր իր նոր գաղափարները, ուղղված առաջին հերթին ֆեոդալական դասակարգի բոլոր անարդարությունները սրբագործող, շահագործողներին հովանավորող եկեղեցու և կղերականության դեմ։ Ի՞նչ գաղափարներ էր քարոզում Սմբատ Զարեհավանցին։ Այս հարցին պատասխան տալու համար մենք ունենք հիմնականում երեք սկզբնաղբյուր, դրանք են Գրիգոր Նարեկացու թուղթը ուղղված Կճավա վանքի միաբաններին, Գրիգոր Մագիստրոսի մեզ ծանոթ նամակները և Արիստակես Լաստիվերտցու Հայոց պատմությունը։

Օժանդակ ու ստուգիչ աղբյուրներ են նախ՝ Շնորհալու «Թուղթ ընդհանրական»-ը, Ստեփանոս Սրբազանի «Բան դիմադրական ընդդէմ հերձուածոցն» աշխատությունը, Պողոս Տարոնացու դավանաբանական գրվածքն ընդդեմ քաղկեդոնականության և մի շարք այլ հեղինակների մոտ պահպանված թուցիկ տեղեկություններն ու ակնարկները։

Հեշտացնելու համար Սմբատի ու նրա հետևորդների հիմնական գաղափարների ուսումնասիրությունը, մենք ստորև հատվածաբար մեջ ենք բերում վերոհիշյալ հիմնական աղբյուրներից անհրաժեշտ մասեր.

1. Գրիգոր Նարեկացի. «Թուղթ»... զոր գրեաց ի հոյակապ. ուիտն Կճաւայ, վասն կարծեացն անիծելոց Թոնդրակեանց...» (Գիրք թղթոց, էջ 498—499)։

«Բազում ինչ աստուածային եւ առաքելական ամենայն ինչ ուրացեալ է ի նոցանէ, եւ խափանեալ յաստուածային կարգաց։ Ա. ձեռնադրութիւնն, զոր առաքեալքն ի Քրիստոսէ ընկալան։ Բ. Եւ հաղորդութիւն մարմնոյն նորա՝ զոր ասաց առաքեալ, եթէ զհացն հաղորդութեան ճաշակելով, գնոյն ինքն զԱստուած միացեալ ի մարմնի ընդունիմք եւ ճաշակեմք, զոր Սմբատ հասարակաց կերակուր զսարսափելին վարդապետաց։ Գ. Եւ զծնունդն հոգեւոր երկանցրն, որ ի ջրոյ եւ ի հոգւոյ, ծանուցեալ, թէ որդիս Աստուծոյ գործէ, ջուր ինչ լուալեաց զնոյն նոցին ուսոյց։ Դ. Եւ զաւրհնաբանեալ զաւր կիւրակէն յորում արար (Աստուած) զլոյսն առաջին... Ե. Զծնրադրութեան խորհրդական պաղատանս, զոր ինքն արարիչն ամենայնի (Յիսուս Քրիստոս) խոնարհեալ կրբընկնեաց։ Զ. Թէ գաւազանն ուրացեալ ի նոցանէ, յորում ինքն Քրիստոս մկրտեցաւ, Է. Թէ զհաղորդութիւն անմահութեանն, զոր ինքն բոլորից Տէրն ճաշակեաց։ Ը. Թէ զմծղնեական անիտիղ պղծութիւնն, զոր Տէրն զհայեցուածն արգելեալ խտրեաց։ Թ. Թէ զնշանն երկրապագեալ, զոր Աստուածն մարդացեալ յուսն իւր բարձեալ կրբեաց իբր զփառս ինքեան եւ զիշխանութիւն։ Ժ. Թէ զմարդապաշտ ուրացութիւնն, որ գարշելի է եւ անիծեալ քան զկռապաշտութիւն։ Ժա. Թէ զինքնաձեռն քամահանաց քահանայութիւն, որ սատանայի է նմանութիւն։ Ժբ. Թէ զպսակին ամուսնութեան անգոսնութիւն, որ Տէրն ինքեան սքանչելեաւք, եւ մարբն իրով Աստուածածնաւ յարգեաց եւ պատուեաց, զպսակն անգոսնեն, եւ զոր սիրով մերձենան յիրեարս, կատարեալ սէր համարին և յԱստուծոյ, եւ հաճոյ Քրիստոսի, թէ՝ Աստուած սէր է և զսիրով միաւորելն կամի եւ ոչ զպսակ։ Ժգ. Թէ զերախայրեացն կատակերգական երգիծանութիւնն, զոր Աբէլ և Նոյ, եւ Աբրահամ, եւ Դաւիթ, եւ Սողոմոն, եւ Եղիայ աստուածային բարկութեան ցուցին հաշուարարութիւն։ Ժդ. Թէ որ զգբլխաւորն աղանդին իւրեանց գարշութեանն հանդգնեալ Քրիստոս անուանեն...

2. Գրիգոր Մագիստրոս. Թուղթ կէ՝ «Պատասխանի թղթոյն կաթողիկոսին ասորւոց» (Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 154)։

«Եւ քարոզէր (Սմբատ) զբոլոր քահանայական ներգործութիւնս ոչնչացանել, մանաւանդ եթէ սնոտի վարկանել. հւ նստէր բաղբաղանօք իբրեւ զքահանայապետ. եւ ոչ իշխէր յայտնի եպիսկոպոսունս իւր ձեռնադրեալ կամ քահանայս կամ սարկաւագունս կամ օրհնութիւնս իւղոց, այլ ասէր ոչ այլ ինչ է այդ. բայց վասն խաբելոյ ժողովրդեանն, ի գաղտնի լուծելոց եպիսկոպոսացն եւ յարտաքսելոցն գիշերի զանարժան ձեռնադրութիւն ոչնչացնելով առ-

նեն, եւ զիւղն սրբազան, որ ի կատարապետողէ անտի բաշխի, խառնեալ իմն արհամարհելով զնա, եւ ծաղր առնելով, կատականս առնեն»։[1]

«Որք ասէին, եթէ մեք ոչ եմք նիւթապաշտք, այլ աստուածապաշտք, եւ զխաչ և զեկեղեցի եւ զզգեստ քահանայի եւ զպատարագագործութիւն, զայսոսիկ ոչինչ համարիմք, այլ զխորհուրդ նոցա»։[2]

«Եւ այսինչ են անօրէնութիւնք չարագործացն այնոցիկ, ոչ պահք նոցա, եթէ ոչ երկնչին, յայտնի եւ ոչ խորութիւնք արանց եւ կանանց եւ ոչ ընտանեաց. թեպէտ և ոչ յայտնապէս համարձակին եւ ոչ պատուէն եւ ոչ զմի ինչ՝ ոչ յաստուածայնոց եւ ոչ յեղելոց, այլ զամենայն ծաղր առնեն՝ գհին եւ զնոր օրէնսն»։[3]

3. Արիստակէս Լաստիվերտցի, Պատմութիւն Հայոց (գլուխ ԻԳ, «Թէ որպէս ի Մանանաղայ սահմանսն բորբոքեցաւ հրդեհ մոլորութեանն»), էջ 162։

«Բայց զնոցա Մծղնէ ղգործն անպատշաճ համարեցաք ընդ գրով արկանել, քանզի կարի աղտեղի է. եւ զի ոչ ամենայն ոք պնդակազմ և լսելիօք, բազմաց մեղացն յիշատակ՝ ի խաղտանս ձգէ զլսողսն, և ի կատարումն գործոյն իսկ ածէ. վասն այսորիկ եւ ես խոյս ետու յայնմանէ։ Այլ որ յայտնի է ի սոսա, և մեզ ասելի է՝ այսոքիկ են։ Ջեկեղեցի և զեկեղեցւոյ կարգավորութիւն բնաւ ոչ ընդունէին, ոչ զմկրտութիւն, և ոչ զմեծ և զսարսափելի խորհուրդ պատարագին, ոչ զխաչ և ոչ զկարգաւորութիւն պահոց։ Այլ մեք ճշմարիտ հաւատացեալքս սրբոյ երրորդութեանն պինդ կալցուք զխոստովանութիւն անշարժ յուսոյն, զոր ուսաք ի սուրբ հարցն, և ի նոցա աստուածուրաց ժողովոյն ի բաց դարձուսցուք զերեսս, անէծս ի վերայ նոցա առաքելով»։

Ինչպես դժվար չէ համոզվել վերոհիշյալ աղբյուրների նույնիսկ հարևանցի քննությունից, դրանց հեղինակները (Գր. Նարեկացի, Մագիստրոս, Ար. Լաստիվերտցի), ինչպես և նրանց կրկնող այլ կղերա-ֆեոդալական պատմիչներն ու մատենագիրները, շարադրել են Սմբատ Զարեհավանցու և նրա հետևորդների գաղափարները աղավաղված ու միտումնավոր՝ նենգափոխած ձևով։ Ապա շարադրել են միայն այնպիսի գաղափարները, որոնք ընթերցողների համար «վտանգավոր» չէին, այսինքն՝ կարդալով ու ծանոթանալով այդ գաղափարներին, ընթերցողները չէին «մոլորվի» հայ եկեղեցու և գաղափարական, և սոցիալական հիմքերը խարխլող այդ գաղափարների ազդեցության ներքո։ Ուստի նրանք լռում են և Թոնդրակեցիների ու նրանց գաղափարական հիմնադրի սոցիալական և տնտեսական դրույթների մասին չեն անում նույնիսկ որևէ ակնարկ։ Նրանց հաղորդած դրույթները հիմնականում վերաբերում են այդ ռևոլյուցիոն շարժման դավանաբանական կողմին, որոշ դեպքերում միայն բարոյական ուսմունքին, մի հանգամանք, որ չափազանց դժվարացնում է մեզ շատ ավելի հետաքրքրող հարցերի լուծումը։ Այդ հարցերն են՝ ի՞նչ վերաբերմունք ունեին Թոնդրակեցիները տիրող դասակարգերի հանդեպ, ինչպե՞ս էին կազմակերպված նրանց համայնքները, արդյո՞ք ընդունում էին նրանք մասնավոր սեփականությունը, թե ապրում էին որպես «հավասարներ» և այլն։

---

[1] Գ. Մագիստրոսի «Թղթերը», էջ 134։
[2] Նույն տեղում, էջ 137։
[3] Նույն տեղում, էջ 160 - 161։

Ջնայած աղբյուրների նշված թերություններին, մենք կաշխատենք մեր ուժերի ներածին չափով պատասխանել վերոհիշյալ և հարակից մի շարք այլ հարցերի։

Սմբատ Զարեհավանցին առանց որևէ վերապահության ժխտում էր եկեղեցու անհրաժեշտությունը։

Հայ եկեղեցին, ինչպես մենք արդեն առիթ ենք ունեցել նշելու, ամենախոշոր կալվածատերը լինելով հանդերձ, միևնույն ժամանակ տիրող ֆեոդալական հարաբերությունների սրբագործողն էր և ժողովրդի վզին նստած սնահագ տզրուկի նման քամում էր նրա ողջ կենսական հյութերը։ Որ թալանչիական իրավունքը եկեղեցին հիմնավորում էր տեսական հետևյալ դրույթով. բոլոր մարդիկ հակված են դեպի մեղքը և ամեն քայլափոխում (նամանավանդ սոցիալ-տնտեսական սուր բախումների այդ էպոխայում) շեղվում են աստծո և նրա եկեղեցու կողմից գծված ուղիղ ճանապարհից, որն առաջնորդելու է նրանց դեպի հանդերձյալ երանություն։ Գործած հանցանքները բավելու, որով և դրախտի փակված դռները ցանկացած մարդու առաջ բանալու իրավունքը վերապահվում է եկեղեցու պաշտոնյաներին, որոնք կարգված են ի վերուստ որպես միջնորդ մարդկանց և աստծու միջև։ Եկեղեցու պաշտոնյաներն իրավասու են իրենց աղոթքներով ու պատարագներով քավել մարդկանց հանցանքները և ապահովել նրանց անդրաշխարհային վայելքները։ Հասկանալի է, որ միջնադարի այս «ծանր» պարտականությունները եկեղեցու պաշտոնյաները ձրի չէին կարող կատարել։ «Աստծու տունը» շեն պահելու, այլ խոսքով՝ իրենց անձնական անբարոյական ու զեխ կյանքն ապահովելու նպատակով կղերականությունը, բացի եկեղեցու համար գանձվող ամենածանր հարկից (տասանորդ), թալանում էր ժողովրդին ամեն մի հարմար առիթի, կյանքի բոլոր քայլափոխերին։ Երեխա ես կնքում՝ պետք է վճարես եկեղեցուն, հարսանիք ես անում՝ պետք է վճարես, մեռել ես թաղում՝ պետք է վճարես, մեղքերիդ թողություն ես հայցում՝ պետք է վճարես...»[1]

Սմբատ Զարեհավանցին և իր համախոհները, ընդհակառակը, իրենց պայքարի ամենասուր ծայրն ուղղում էին եկեղեցու դեմ, որպես ֆեոդալական կարգերի ամենաամուր հենարանի, և հրաժարվում եկեղեցուն ենթարկվելուց, նրան հարկեր ու զուրքեր վճարելուց։ Այս ռևոլուցիոն քայլը նրանց կողմից, ի հարկե, պետք է հիմնավորվեր տեսականորեն, նրանք պետք է հաշիվ տային թե իրենց հետևորդներին և թե թշնամիներին՝ իրենց վարվելակերպի արդարացիության մասին։

Ահա կենսական նշանակություն ունեցող այս պրոբլեմի շուրջը, որպես կուռ աշխարհայացք կազմավորվում է թոնդրակեցիների հակաեկեղեցական ուսմունքը։

Սմբատ Զարեհվանցին քարոզում էր, որ ամեն մարդ լինելով ազատ և անկաշկանդ, կարող է ազատ կամքով ընտրել իր կյանքի հանապարհը կամ համաձայն աստվածային օրենքների, կամ ընդդեմ այդ օրենքների։ Յուրա-

[1] Հետաքրքրական է այս տեսակետից Մատենադարանի № 4669 ձեռագրի տվյալ հերետիկական հախտ-ի մասին։ Այսպես ասված է. «Աշխարհամբուրն 6 ստակ, գերեզման օրհնեքն 2—2 ստակ, տուն օրհնեք՝ 2—3 ստակ, աղջկան պսակ դրամն՝ 35 ստակ... նշան օրհնեքն՝ 6 ստակ, հալավ օրհնեքն՝ 6 ստակ... կնքադրամն՝ 6 ստակ, մեծ մարդուն հոգադրամն՝ 12 ստակ, փոքրին՝ 6 ստակ, հոգոյ մորթածին և մատաղին՝ կաշին, մորթին և երին և մեռելին դանձին՝ հալաթն և դներքևնոցն և դվրանոցն...» (Ձեռ. № 4669, 172 ա)։

բանչյուր անհատ ինքն է պատասխանատու իր արարքների համար և ինքնին, առանց կողմնակի միջնորդության, այսինքն՝ առանց ստվարաթիվ պորտաբույծ կղերականների օգնության, կարող է վաստակել անդրաշխարհային վայելքները ճաշակելու իրավունք։

Ուստի՝ եկեղեցին ավելորդ է։

Ուստի՝ անընդունելի են եկեղեցու խորհուրդները։

Մկրտությունը, որով մանուկն ընդունվում է եկեղեցու գիրկը, մի սովորական լվացում է և ոչինչ չունի խորհրդավոր. ավազանը սովորական ջրաման է և ոչնչով չի նպաստելու կնքվողին և այս, և մյուս աշխարհում։ Այս դրույթից հետևում է, որ եկեղեցին մկրտության պատրվակով այլևս իրավունք չպետք է ունենա դիզել հսկայական նյութական արժեքներ ու դրամ։

Պսակի և ամուսնության մեջ եկեղեցին ոչ մի իրավունք չունի խառնվելու, այդ առիթով արվող ծեսերն ու արարողություններն անիմաստ են, հետևաբար և ավելորդ. ամուսնության հիմքում պետք է ընկած լինի զույգերի փոխադարձ սերն ու համաձայնությունը։ Այստեղից հետևում է, որ եկեղեցու պաշտոնյաները զրկվելու են իրենց հասույթների նաև մյուս կարևոր աղբյուրից։

Հաղորդությունը և ողջ պատարագը դատարկ ու սնոտի արարողություններ են և ոչ մի օգուտ չեն բերում հավատացյալներին։ Թոնդրակեցիների առաջնորդներից Կյուրեղը (ըստ Մխ. Ապարանցու) Սմբատի անմիջական աշակերտներից մեկը[1] վերցնելով հաղորդության խմորը թրջում էր հաղորդության ռինու մեջ, դեն էր նետում ասելով. «Այդ է խաբեությունն քրիստոնէից»։

Աստծուն ձոնվող նվերները (երախայրիք)՝ մատաղը, հոգեհանգիստը, հոգեդրամը միայն մի իմաստ ունեն, նրանց միջոցով եկեղեցու պաշտոնյաները հնարավորություն են ստանում ավելի փարթամ ու շվայտ կյանք վարելու ի հաշիվ մոլորված ժողովրդի, ուրեմն պետք չէ նվերներ ու զոհաբերություններ կատարել։

Թոնդրակեցիների առաջնորդներից մեկը ծաղրելով մատաղի սովորությունը մատաղացու անասունին դիմելով ասում է. «Այ տառապեալ չորքոտանի. թող թէ նա (այն անձը, որի հոգու փրկության համար մատաղ էին մորթելու) զիւր ժամանակն մեղս արար և մեռաւ, դու ղի՞նչ մեղար, որ ընդ նմա մեռանիս»։[3]

Նույնպիսի դատողություններով նրանք ժխտում էին ձեռնադրությունը, ծնրադրությունը և եկեղեցում արվող աղոթքները, և պահքը և ողջ եկեղեցական ծեսերն ու արարողությունները։

Այսպիսով Սմբատ Զարեհավանցին ժխտում էր եկեղեցու անհրաժեշտությունը. Սմբատի աշակերտ Կյուրեղն ուղղակի հայտարարում էր, որ «Աստուած ընդ ամենայն տեղիս է», և նրան պաշտելու համար չպետք է մտնել եկեղեցի, չպետք է պաշտել խաչն ու պատկերները, եկեղեցական զգեստներն ու անոթները, որովհետև «մեք աստուածապաշտք եմք և ոչ նիւթապաշտք»։[4]

Այս բոլորից բխում է Սմբատի և նրա մերձավոր հետևորդների ուսման-

[1] Մխ. Ապարանեցի, Ազանդավոր հայք Թ--ԺԵ դարու (տես Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 550)։

[2] Գր. Մագիստրոսի «Թղթեր»-ը, էջ 157։

[3] Ակ. Լաստիվերացի, Պատմ., էջ 147։

[4] Գր. Մագիստրոսի «Թղթեր»-ը, էջ 157 և Մխ. Ապարանեցի, էջ 551։

քի ամենաուռոլուցիոն դրույթներից մեկը՝ պաշտոնական եկեղեցու ամբողջական ժխտումը և հայ եկեղեցուց սահմանազատված, անկախ և ուրույն սկզբունքների վրա խարսխված համայնքների ստեղծումը։

Ժխտելով ֆեոդալիզմի հլու սպասավոր եկեղեցին, որպես անարդարության սոցիալ-տնտեսական հարաբերությունների կրող ու սրբագործող ինստիտուտ և ստեղծելով իրենց նոր գաղափարական սկզբունքների հիման վրա, թոնդրակյան գաղափարներն ընդունած ընտանիքների համայնքներ, բնական է, որ Սմբատ Զարեհավանցու հետևորդները պետք է իրականացնեին այդ համայնքներում ֆեոդալական սոցիալ-տնտեսական իրականությանը հակադիր գույքային ու դասային հարաբերություններ։

Կրկին անգամ չենք կարող չցավել, որ թոնդրակեցիների համայնքների ներքին կյանքի մասին, նրանց թշնամիների կողմից գրված աղբյուրներում, բան չի ասված։ Այնուամենայնիվ, որոշ ակնարկներ հնարավորություն են տալիս պարզաբանելու այդ համայնքների ներքին կյանքի մի քանի կողմերը։

Գրիգոր Մագիստրոսը, մեր կողմից բազմիցս վկայակոչած Ասորոց կաթողիկոսին ուղղված թղթում, հայհոյանքների ու լուտանքների հետ մեկտեղ հայտնում է, որ թոնդրակեցիների մոտ չկա «խտրութիւնք արանց և կանանց և ոչ ընտանեաց»։[1]

Այս չափազանց հետաքրքիր տեղեկությունը քննելուց առաջ անհրաժեշտ է ցույց տալ, որ Մագիստրոսն այս դեպքում ևս հաղորդում է ոչ թե իսկությունը, այլ նենգափոխում է իրական փաստը, իր դասակարգային հակառակորդներին վարկաբեկելու և նրանց դեմ ուղղված իր տմարդի հալածանքներն արդարացնելու նպատակով։

Գր. Նարեկացին, ինչպես տեսանք իր մեղադրանքների ԺԲ (12-րդ) կետում, հայտնում է, որ թոնդրակեցիներն անգոսնում են պսակն ու ամուսնությանը «և զոր սիրով մերձենան յիրեարս կատարեալ սէր համարին», ասելով. «Աստուած սէր է և սիրով միաւորիլն կամի և ոչ զպսակ»։ Միջնադարյան մի այլ հեղինակ խոսելով թոնդրակեցիների ու այլ աղանդավորների մասին, հայտնում է, որ նրանք թույլ էին տալիս կանանց «ելանել ի բեմն»։[2]

Այս երկու վկայություններից պարզվում է, որ թոնդրակեցիները կնոջ և տղամարդու միջև ոչ մի տարբերություն չէին դնում և նրանց կապի միակ հիմքը համարում էին փոխադարձ սերն ու հարգանքը։ Արդ, եթե նրանք հավասարեցնում էին կնոջն ու տղամարդուն իրենց իրավունքներով և օրենքի ու աստծու առաջ նրանց դիտում էին որպես իրավահավասարներ, ապա բնական է ենթադրել, որ իրավահավասար էին համարում նրանք իրենց համայնքի բոլոր անդամներին։

Այս ծանոթությունից հետո հասկանալի է դառնում, որ Մագիստրոսից բերված տեղեկությունը, հակառակ հեղինակի ցանկության (Մագիստրոսի նպատակն է եղել տղամարդկանց և կանանց միջև տարբերություն չդնող թոնդրակեցիներին մեղադրել պոռնկության մեջ), գալիս է պարզելու թոնդրակեցիների համայնքի անդամների միմյանց հանդեպ ունեցած փոխհարա-

[1] Գր. Մագիստրոսի «Թղթեր»-ը, էջ 160։
[2] Պողոս Տարօնացի. Թուղթ ընդդեմ Թէոփիստայ, Կ. Պոլիս, 1752, էջ 103։

բերությունների և յուրաքանչյուր իրավական վիճակի կնճռոտ հարցը։ Հատկապես ուշագրավ են Մագիստրոսի վերևում բերված հատվածի վերջին բառերն այն մասին, որ նրանց մոտ չկա խտրություն ընտանիքների մեջ։ Հետևաբար այս փաստի հիման վրա կարելի է հանգել միայն մի եզրակացության, այն է Թոնդրակյան համայնքի մեջ մտնող ընտանիքներն ու անհատները իրավահավասար էին, ապրում էին տնտեսական սերտ համագործակցությամբ և թերևս իրականացրել էին տիրող ֆեոդալական կարգերի դեմ մղած մարտերում դիմացկուն ուժ ստեղծելու նախապայմաններից ամենագլխավորը՝ արտադրական միջոցների հանրությունը։

Ճիշտ է, վերջին եզրակացության հաստատման համար մեզ չեն հասել ուղղակի վկայություններ, սակայն, եթե նկատի ունենանք, որ Ա. Լաստիվերտցին հրաժարվում է Թոնդրակեցիների մասին մանրամասն տեղեկություններ հաղորդելուց, վախենալով, որ նրանց գաղափարները, վարակի նման, կտարածվեն ողջ աշխարհում, և եթե վերհիշենք այն արյունահեղ ու դաժան միջոցները, որոնցով հայ ֆեոդալներն ու եկեղեցին գործել են շարժման մասնակիցների նկատմամբ, ապա կհամոզվենք, որ Թոնդրակեցիների մասին Լաստիվերտցու և մյուս մատենագիրների կողմից չհրապարակված, լռության մատնած տեղեկություններն առաջին հերթին պետք է հաստատեին նրանց համայնքների համակեցության այս արմատական ռևոլուցիոն կողմը։

Այսպիսով, Սմբատ Զարեհավանցին, աղատ սիրո և ազատ ամուսնության իր արմատական գաղափարով խախտում է ֆեոդալական հասարակության ծնունդ ֆեոդալական ընտանիքի հիմքերը և բարոզում սեռերի ու մարդկանց նոր փոխհարաբերություններ։

Մարդկանց իրավունքների հավասարեցման հետ միասին նա դնում է ընտանիքների տարբերությունների (իմա՝ սոցիալ-տնտեսական տարբերությունների) վերացման, կամ որ միևնույնն է, նրանց հավասարեցման մի գաղափար, որի իրականացման նախապայմանը մասնավոր սեփականության վերացումն ու համայնական սեփականության ստեղծումն է։

Այսպիսի մահացու հարվածներ հասցնելով պաշտոնական եկեղեցուն որպես ֆեոդալական ամենակազմակերպված գիշատիչ հաստատության և ֆեոդալական անարդարացի հարաբերությունների սրբագործող ինստիտուտի, Սմբատ Զարեհավանցին իր հետևորդների հետ մեկտեղ, ինչ խոսք, որ պետք է ստեղծեր նոր կրոն ու հավատք։

Եվ ինչքան որ արմատական էին նրա սոցիալ-տնտեսական պահանջները, այնքան էլ արմատական պետք է լիներ նրա գաղափարներն ընդդեմ եկեղեցու իդեոլոգիայի և աշխարհընկալման։

Միջին դարերում հերձվածներ շատ են եղել, բայց այդ հերձվածների գգալի մասը հենվելով նույն քրիստոնեական եկեղեցու սուրբ գրքերի (հին և նոր կտակարանների) վրա, համարձակվել են միայն եկեղեցուն հակառակ, այս կամ այն կերպ մեկնել սուրբ գրքի այս կամ այն միտքն ու հատվածը։ Սմբատ Զարեհավանցին և նրա հետևորդներն իրենց արմատական սոցիալ-տնտեսական պահանջներով այնքան հեռու էին գնում, որ Գրիգոր Մագիստրոսի արտահայտությամբ «ոչ եթէ ի մինն միայն մեղանչելն կամ յերկուս, այլ ի բոլոր օրենսդրութիւնս իւրեանց ամենեին արտաքոյ են հին և նոր օրինացն»։

«... Այսպէս ոչ եթէ հերձուած դոցա միոյ պատճառի է, կամ երկուց կամ երից, այլ յամենայն շարափառացն... զթոյնս շարութեան ի մի վայր ժողովեալ»։[1]

Ելնելով այս դրույթից, Մաղիստրոսն ու մյուս միջնադարյան հեղինակները նրանց մեղադրում են և մանիքեության և էպիկուրիզմի և պավղիկյանության և մծղնեության և բազմաթիվ այլ աղանդների ու փիլիսոփայական ուղղությունների պատկանելու համար։

Անշուշտ, Սմբատ Զարեհավանցին եկեղեցու դեմ մղած իր պայքարում ունենալով թեկուզ և պավղիկյանների նման նախորդներ, չէր կարող փոխ չառնել նրանցից գաղափարական որոշ դրույթներ, ինչպես և չէր կարող չորդեգրել նրանց պայքարի մեթոդները։ Սակայն մեծ սխալ են գործում այն ուսումնասիրողները (իսկ այդպիսիք շատ են), որոնք աշխատում են նույնացնել թոնդրակեցիներին նրանց գաղափարական նախորդների հետ, և կամ մասնատելով նրանց ուսմունքը, արհեստականորեն աշխատում են անպատճառ գտնել դրանց ակունքները նախորդ դարերի հերձվածողական ու հերետիկոսական այնպիսի հոսանքների մեջ, որոնք բոլորովին չեն կապվում թոնդրակեցիության հետ։

Թոնդրակեցիները սոցիալական պայքարի դրոշ բարձրացրին 9—11-րդ դարերում ընդդեմ հայկական ֆեոդալիզմի և հայկական եկեղեցու, և այդ դրոշի վրա դրեցին այն սոցիալական պահանջները ու գաղափարները, որոնք թելադրում էր ինքը՝ հայկական ժամանակակից հասարակությունը սոցիալ-տնտեսական իր սուր անհաշտելի բախումներով։

Թոնդրակեցիների դաղափարական դրույթները նախընթաց հերետիկոսական ուսմունքների համեմատությամբ որակապես նոր էին և թարմ։

Նրանք, ինչպես տեսանք, չէին ընդունում և հին, և նոր կտակարանները, այսինքն քրիստոնեության հիմնաքարերը։

Քրիստոսը նրանց համար մի սովորական մարդ էր, ծնված այնպես, ինչպես ծնվում են բոլոր մարդիկ. նա ճշմարտություն էր քարոզում և ճշմարտության համար էլ զոհվեց տիրողների կողմից։ Ուստի և քրիստոսներ են ճշմարտության բոլոր քարոզիչները։ «Զգլխաւորն ապանդին իւրեանց գարշութեանն յանդգնեալ Քրիստոս անուանէն»,[2]— դրում է թոնդրակեցիների մասին Գրիգոր Նարեկացին։

Նրանց աստվածը քրիստոնեական «հայր աստվածը» չէ, որ գործում է իր որդու և սուրբ հոգու համագործակցությամբ։ Զարեհավանցու քարոզած աստվածը սերն է, անսահման բարությունը։

Մարդս ստեղծվել է ունենալով գործելու անսահման ազատություն— ուստի պետք է խորտակվեն եկեղեցու ու պետության կողմից ստեղծված նրա գործունեության ազատությունը կաշկանդող շղթաները։ Ամեն ոք կարող է ընտրել կյանքի ուղիղ ճանապարհը, ինչպես և հետևել եկեղեցուն ու իր կյանքն անցկացնել գարշ առօրյայով, դառնալով չար ուժերի սպասավոր։ Ապրելու համար անսահման բարի աստծուն, որը սեր է, մարդս պետք է դեմ դուրս գա տիրող սոցիալ-տնտեսական կարգերին և ստեղծի հավասարների

[1] Գր. Մաղիստրոս, էջ 160։
[2] Գիրք Թղթոց, էջ 498—502։

եղբայրական համայնքներ, որ բոլորը հավասար տնտեսական միջոցների և հավասար իրավունքների տեր են։

Սմբատ Զարեհավանցու, նրա բազմաթիվ հետևորդների քարոզած այս գաղափարները բացասումն էին այն ամենի, ինչ կար միջնադարյան կղերա-ֆեոդալական գաղափարների ազդեցության տակ գտնվող մարդկանց մտածողության մեջ։ Բացասվում էին մարդու կեցության ֆեոդալական սկզբունքները և հռչակվում նոր՝ այն ժամանակվա համար պրոգրեսիվ ու ռևոլուցիոն սկզբունքներ։

Սմբատ Զարեհավանցին իր ռևոլուցիոն գաղափարների պրոպագանդան սկսում է Ապահունյաց գավառի Թոնդրակ[1] ավանում։ Կարճ ժամանակում նա գտնում է բազմաթիվ հետևորդներ և գաղափարակիցներ։ Զարեհավանցու ուսմունքի հետևորդներից շատերը ոչ թե դառնում են նրա պասիվ կողմնակիցները, այլև զարգացնելով ու լրացնելով գաղափարները, տարածում են այն հարևան նահանգներում ու գավառներում։ Նրա եռանդուն, անվախ աշակերտների, բոլորին հասկանալի լեզվով ու ոճով կազմված, քարոզները ոտքի են հանում Հայաստանի բազմաթիվ շրջանների աշխատավորությանը՝ ընդդեմ եկեղեցու և եկեղեցական պաշտոնեության, ընդդեմ վանքերի ու սրբատեղիների, հանուն նոր, արդարացի սոցիալ-տնտեսական հարաբերությունների։

Կարճ ժամանակամիջոցում դուրս գալով Հայաստանից՝ շարժումը տարածվում է նույն սոցիալ-տնտեսական հարաբերություններով ապրող Աղվանից (ներկայիս Ադրբեջան) հասարակության մեջ, ինչպես Հայաստանում, այնպես էլ այստեղ շարժման դեմ պայքարողների շարքերում նշվում են Աղվանքի հոգևորականներն ու կաթողիկոսները։

Բարեբախտաբար սկզբնաղբյուրները պահել են Սմբատի ամենամերձավոր և ամենահեղինակավոր աշակերտներից մի քանիսի անունները։ Դր. Մադիստրոսն այդ առթիվ գրում է.

«Զանիծեալս Սմբատ եւ որ զկնի նորա այսոքիկ՝ Թոդրոս, Անանէս, Արքայ, Սարգիս, Կիւրեղ, Յեսու, այսոքիկ են, որ նորին աղանդով կացին աւելի քան Զճ. և Հ (170) ամ մինչև ցայս. անիծեալ զնոսա բոլոր Հայաստանեաց և Աղուանից քահանայապետացն, զգուշացուցին ոչ մերձենալ իսկ առ նոսա և ոչ ճաշակել և ոչ զրուցել և ոչ յարկս նոցա մտանել...»։

Դրանցից Կյուրեղը («անիծեալ առաջնորդն Թոնդրակեցեաց») քարոզում էր, որ աստված ամենուր է և պաշտվում է բոլորի կողմից և որ իրենք նյութապաշտներ չեն, այլ աստվածապաշտներ։ Հետևաբար և նա չէր ընդունում եկեղեցին, խաչը, պատկերներն ու եկեղեցական զգեստները, համարելով այդ բոլորը անիմաստ և կեղծիքի արդյունք։

Կյուրեղի հաջորդը, Թոնդրակեցիների մի այլ առաջնորդ՝ Հովսեփը ժխտում էր պատարագը և «սնոտի յոյսս» էր համարում եկեղեցական կարգն ու ձեռնադրությունը։[3]

---

[1] Թոնդրակ տեղանունը ստուգաբանում են կապելով Կոգովիտի և Մագկոան գավառների միջև գտնվող Թանդուրեկ լեռնանվան հետ, որը հայերեն «Թոնդիր» բառի միջոցով բացատրվում է որպես «հրաբխային խառնարան»։

[2] Դր. Մագիստրոսի «Գրքերը»-ից էջ 134։ Նույն անունները կրկնում է Մխ. Ապարանեցին (տես Ալիշան, Հայապատում, էջ 330)։

[3] Մխ. Ապարանեցի, նույն տեղում, էջ 330։

Այսպիսով կարճ ժամանակամիջոցում Սմբատ Զարեհավանցու առաջավոր գաղափարները տարածվեցին Հայաստանի բաղմաթիվ (նույնիսկ հեռավոր) գավառներում ու նահանգներում, ներթափանցեցին հարևան երկրները Ադրբեջան, Վրաստան։[1] Արդեն 10-րդ դարից մենք ունենք վկայություններ, ու անժխտելի փաստեր Այրարատի, Սյունիքի, Հարքի, Վասպուրականի, Մանանաղիի և այլ գավառների, իսկ քաղաքներից հատկապես Խնուսի Թոնդրակեցիների, նրանց գաղափարների ազդեցության տակ բռնկված գյուղացիական ելույթների։ Եվ ահա շարժումը դուրս գալով Թոնդրակի նեղ քարոզչական շրջանակներից, 10-րդ դարի սկզբին դառնում է մասսայական շարժում, որն ընդգրկում է աշխատավորական լայն խավերին։

Այս շրջանում շարժման մասնակիցներին այլևս չի բավարարում գաղափարների միայն տարածումը, կամ ինչպես ընդունված է ասել քարոզը։ Շարժման կողմնակիցներն ու մասնակիցները դիմում են արդեն գործնական քայլերի այդ գաղափարների իրականացման համար։

---

[1] Թոնդրակյան գաղափարների Վրաստանում տարածված լինելու մասին մեզ ուղղակի տեղեկություններ չեն հասել, սակայն վրացերենում պահպանվել է Թո(ն)դրակելի (Թոնդրակեցի) բառը առանց քաշվելու չարություն անողն իմաստով (տես Լ. Մելիքսեթբեկ, «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», էջ 122) մի բան, որ արդյունք կարող է լինել Սմբատի գաղափարների Վրաստան ներթափանցելուն։